



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով


ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Լսի (բ) Կենսկոմի յեկ Բազմի Կոմիտեյի  
մերոդբյուրո



329.150.8

# ՊԱՅԲԱՐԵՆՔ

ԿՈՆԽՈՋՆԵՐՈՒՄ ԱԾԽԱՏԱՆՔԸ ՃԻՇՏ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ  
ՈՒՂԻՂ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Աղխատանքի նյութերի հետ միասին)

Կուսուսմունքի ամբողջ ցանցի համար

338.14  
7-19



Բազմ.—1931



## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ. «Պայքարենք կոլխոզներում աշխատանքը միշտ կազմակերպելու յեկ յեկամուսներն ուղիղ բաժանելու համար»:

### ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1) Պարզել, Վոր կոլխոզներում աշխատանքի կազմակերպումը և յեկամուսների բաժանումն այն հարցն է՝ կոլեկտիվացման բոլոր հարցերից՝ Վորի շուրջն են պտտում կոլխոզային շարժման բոլոր հիմնական տնտեսական-քաղաքական մոմենտները, այսինքն կոլխոզային շինարարության քանակական և վորակական աճումը, կոլխոզիկների նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացումը և չքավորա-միջակային մենաանտեսությունների նոր հոսանքը ղեկի կոլխոզները: Այդ բոլոր մոմենտներն անհրաժեշտ նախադրյալներն են հանդիսանում խորհրդային Միությունում համատարած կոլեկտիվացումն հիմնականում մինչև հնգամյակի վերջն իրականացնելու և դրա հիման վրա կուլակուլությունը—վորպես դասակարգ վոչնչացնելու գործում:

2) Հասկացնել, Վոր կոլխոզներում աշխատանքի կազմակերպման և յեկամուսների բաժանման խնդիրը՝ կուլակուլության հիմնական զծի համար մղվող պայքարի ձևերից մեկն է, ընդդեմ աջ և «ձախ» ուղ-պորտունիզմի ու հաշտվողականության դրանց նկատմամբ:

3) Յերևան բերել Ազրբեջանի կոլխոզների թերուլությունները՝ աշխատանքի կազմակերպման ու յեկամուսների բաժանման ասպարիզում և հասկացնել, Վոր խորհուրդների 6-րդ համագումարի ու ՎԵԿՍ-ՊԵ-ի (բ) հենտկոմի հունիսյան պլենումի վորոշումները տալիս են բոլոր հիմունքները՝ կոլխոզներում աշխատանքի կազմակերպումը և յեկամուսների բաժանումը ուղիղ ղեկու համար, և Վոր այդ վորոշումների ա հապաղ իրագործումով հնարավոր է 1931 թվի բերքահավաքի կամպանիայի խնդիրները լուծել (մանավանդ բամբակի վերսերմամբ):

### ՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆԸ

1. Բանվորական ուժի պլանավորումը յեկ կազմակերպումը

1) Բանվորական ուժն ոգտագործելու պլանը, վորպես աշխատանքի ուղիղ կազմակերպման յեկակետ:

2) Խորհ. Ազրբեջանի կոլխոզների հիմնական թերուլությունները կայանում են՝ կոլխոզիկներին կոլեկտիվի աշխատանքներին քաշելու ձևի, բանվորական ուժի դասավորման և աշխատանքի կազմակերպման մեջ:



17 JUL 2013

30.741

3) Բանվորական ուժի ուղիղ դասավորման և աշխատանքի բաժանման (մասնագիտացում) հիման վրա գործի կազմակերպման ու կոլլեկտիվներին աշխատանքի վորոշ տեսակներին ամրացնելու անհրաժեշտությունը: Բրիգադների տեսակները:

4) Արտադրության միջոցների վերաբերմամբ յեղած անդամություն լուծարքի (լիկվիդացիա) անհրաժեշտությունը, նույնպես և աշխատանքը կատարելու վերաբերմամբ. դրա համար պետք է գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները, լծկանները և այլն ամրացնել բրիգադներին, իսկ բրիգադները—անասուններին (անասնապահություն մեջ) և հողամասերին (գաղաղործությունում)—մասնատանի անդամային աշխատանքների ժամանակ:

5) Արտելի բոլոր աշխատունակ անդամներին աշխատանքով լիովին բեռնավորումը—աշխատանքի բաժանման հիմնական սկզբունքն է:

6) Գյուղատնտեսական արտելներում բանվորական ուժի ավելցուկների և պակասորդի վերացման միջոցները:

7) Գյուղատնտեսության մեջ կոլլեկտիվացման շնորհիվ առաջ յեկած բանվորական ուժի ավելցուկները վերանալու մասին աջ ուղորդուն իստական «Թեորիայի» անանկությունը:

Գրականություն.—Աշխատանքային նյութ № 1.

## 2. Կոլլեկտիվ ամբողջ աշխատանքի կազմակերպումը գործար- խային հիմունքով

1) Հավասարեցուցիչ որավարձը՝ կոլլեկտիվների զարգացման արգելք լինող՝ աշխատանքի կազմակերպման ամենից հետաժամաց ձևն է:

2) Գործարքայինի էյությունն ու առավելությունները:

3) Գործարքայինի ձևերը:

4) Գյուղատնտեսությունում գործարքայինի անգործադրելի լի-  
զելու ուղորդուն իստական «Թեորիան», վորպես մնացորդ հակահեղափո-  
խական և ֆասսատվական թեորիաների:

5) Գործարքայինի ձևական մուծումը, նրա «ձախ» աղավաղում-  
ները և դրանց դեմ անխնա պայքար մղելու անհրաժեշտությունը:

6) Պայքարը վորակի համար—ուղադրության կենտրոնում:

7) Մշակման նորմաները, վորպես գործարքայինի հիմունք:

8) Մշակման նորմաները սահմանելիս ուղորդուն իստական աղա-  
վաղումները, վորպես կուլակային ազդեցության արտահայտություն:

9) Աշխատանքի տարիֆացման անհրաժեշտությունը և աշխա-  
տանքի հավասարեցուցիչ գնահատման ֆասսակարությունը:

Գրականություն.—Աշխատանքի նյութ № 2:

## 3. Ամբողջ աշխատանքի գնահատումն աշխատանքով.

1) Աշխատորը, վորպես գործադրած աշխատանքը հափելու միա-  
վոր և նրա հաշվետուի ձևը:

2) Կոլլեկտիվում աշխատանքի դրամական գնահատության և աշ-  
խատավարձի «ձախ» թեորիայի ֆասսակարությունն ու սխալ լինելը:

3) Աշխատորների և վորպես գործանակնում իրականացման թերու-  
թյունները:

4) Աշխատանքի հաշվետու կարեորագույն տնտեսական-քաղաքա-  
զան խնդիր է:

Գրականություն.—Աշխատանքային նյութ № 3:

## 4. Աշխատանքի սոցիալիստական ձևերի յեվ մեթոդների համար

1) Սոցմրցումը, հարվածայնությունը, հասարակական բուքսիրը  
և այլն, վորպես կոլլեկտիվ տնտեսություն աշխատանքի կազմակերպ-  
ման և արտադրողականություն բարձրացման խոշորագույն ազդակ:

2) Աշխատանքի սոցիալիստական մեթոդների խնդիրները և ձե-  
վերը՝ կոլլեկտիվ արտադրության պայմաններում:

Գրականություն.—Աշխատանքի նյութ № 4.

5. Մեքենասրակսորային կայանների դերը յեվ նշանակու-  
թյունը կոլլեկտիվ աշխատանքի կազմակերպելու գործում.

Գրականություն.—Աշխատանքի նյութ № 5.

## 6. Յեկամուտների յեվ բերքի բաժանումն ըս աշխատանքի հանակի ու վորակի (աշխատանքով)

1) Յեկամուտների և բերքի ուղիղ բաժանման դերը՝ աշխատանքի  
կազմակերպման և կոլլեկտիվացման աճման մեջ:

2) Կոլլեկտիվ յեկամուտների և բերքի բաժանման կարգն ու նրանց  
նպատակային հատկացումները:

3) Յեկամուտների և բերքի սպառողական—հավասարեցուցիչ բա-  
ժանումն ըստ շնչերի կամ ըստ տնտեսությունների, վորպես կուլակա-  
յին սկզբունք:

4) Կոլլեկտիվ յեկամուտների և բերքի բաժանման աշխատանքային  
սկզբունքը գյուղատնտեսական արտելի միակ ուղիղ սկզբունքն է հան-  
դիսանում:

Գրականություն.—Աշխատանքային նյութ № 6.

## ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՅԵՐ

1) Ի՞նչպես պիտի կազմվի բանվորական ուժն ուղադրող յեվ  
պլանը և ինչի՞ է նա հարկավոր:

2) Ի՞նչ հիմնական սկզբունքներով պիտի ղեկավարվել բանվո-  
րական ուժը դասավորելիս և աշխատանքը կազմակերպելիս:

3) Ի՞նչ հիմնական սկզբունք պիտի հիմք ընդունվի արտելի ան-  
դամների մեջ աշխատանքը բաժանելիս:

4) Ի՞նչ ձևեր կան գյուղատնտեսական արտելներում բանվորա-  
կան ուժի ավելցուկներին և պակասորդին վերջ տալու համար:

5) Ի՞նչի մեջ է կայանում հավասարեցուցիչ որավարձի ֆասսա-  
կարությունը և գործավարձի առավելությունը:

6) Ի՞նչ առանձին նշանակություն ունի աշխատանքի վորակը  
գործարքայինի ժամանակ:

7) Ի՞նչ է ցույց տալիս մշակման նորման և ի՞նչպես է նա վո-  
րոշվում:



4  
42862.63



12) Ինչո՞ւ աշխատանքի ուղիղ կազմակերպումը և յեկամուտները ուղիղ բաժանումը կուսակցության հիմնական գծի համար մղած պայքարի ձևերից մեկն է:

Անհրաժեշտ և զբաղմունքներին լայնորեն մասնակից անել կոլ-  
խոզի ակտիվը՝ կոլխոզնիկներին, կոլտնտեսուհիներին, հաշվետարներ-  
նին, քարտուղարներին, նախագահներին, արտադրական խորհրդակ-  
ցութւնների ներկայացուցիչներին և այլն:

5) ՎԵԿՍՊԵ-ի (Բ) Կենտրոնի հունիսյան պլենումի բանաձևը՝ ընկ.  
Յակոբյիսի գեկուցման առթիվ:

Առ աջադուրսիւնը յեկ աշխատանքային նյութը գրել է՝  
 րնկ. Ա. Ն. Տ. Ե. Կ. Կ. Ն. Բ.



## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆՅՈՒԹ № 1.

«Աշխատանքի կազմակերպման հարցերը՝ վոչ թե նրանց ընդհանուր ձևով, այլ մասնա մասն պիտի մշակվեն ու յուրացվեն ամեն մի կոլխոզնիկի, ամեն մի բրիգադի կողմից արտադրական խորհրդակցություններում և ընդհանուր ժողովներում—մինչև դաշտ դուրս գալը»:

(«Գրավդա»)

### 1. ԳԼԽԱՎՈՐՆ—ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂԻՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ Ե

Կոլխոզներում աշխատանքի կազմակերպումն ըստ եյուրթյան նշանակում է արտադրության կազմակերպումը նոր, համայնական սկզբունքներով: Դա այն հանգուցակեան է հանդիսանում, վորի շուրջը պտտում են կոլխոզներն ամրապնդելու բոլոր հիմնական միջոցառումները՝ աշխատանքի արտադրողականության բարձրացումը, կոլխոզային արտադրության և նրա ապրանքայնության աճումը, պայքարը կորուստների դեմ, համայնացրած և անբաժանելի ֆոնդերի մեծացումը, արտադրության միջոցների, քարշաուժի ու բանվորական ուժի ավելի ուսուցումը և օգտագործումը: Կոլխոզային տնտեսության հիմնական վորակական ցուցանիշները—աշխատանքային դիսցիպլինան, աշխատանքները ժամանակին կատարելը, կոլխոզային արտադրանքի վորակը, աշխատանքի նոր, սոցիալիստական ձևերի իսկական արմատացումը և այլն—այս բոլորը հավասարապես կախված են այն բանից, թե կոլխոզներում աշխատանքն, արդյոք, կազմակերպված է ճիշտ սկզբունքներով թե վոչ:

Միայն աշխատանքի ճիշտ կազմակերպումը է, վոր կոլխոզները կարող են ապահովել այն հսկայական խնդիրների հաջող լուծումը, վոր կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը դնում են մեր առաջ՝ 5-ամյակի 3-րդ—վճռական տարում:

Սակայն աշխատանքի ճիշտ կազմակերպման վճռական նշանակությունը բոլորում է վոչ միայն այն բանից, վոր նրա շնորհիվ է հրնարավոր կոլխոզների քանակական և վորակական աճումը: Նրանից և կախված նաև հենց իրեն—կոլխոզնիկի նյութական շահագործողականությունը, կոլխոզային յեկամտի այն մասը, վոր կոլխոզնիկն է ստանում՝ իր աշխատանքի հետևանքով ու նրա համապատասխան:

Կոլխոզային յեկամուտները և բերքը գյուղատնտեսական արտելի անդամների մեջ բաժանելու հարցի ուղիղ լուծումը՝ համաձայն աշխատանքի քանակի ու վորակի, և աշխատանքի ճիշտ կազմակերպումը՝ կոլխոզային արտադրությունով կոլխոզնիկի նյութական շահագործողականության հիման վրա, — սրանք ներկոլխոզային կյանքի յերկու ամենահիմնական հարցերն են, վոր անխզելի կերպով կապված են մեկ-մեկու հետ ու պայմանավորվում են իրար: Նրանք, ըստ եյուրթյան, միևնույն հարցի յերկու կողմերն են հանդիսանում:

Կոլխոզային շինարարության հիմնական դրույթներին մեկն է,—ինչպես ասում է ընկ. Յակովլևը խորհուրդների 6-րդ համագումարում արած իր գեկուցման մեջ,—աշխատանքի այնպիսի կազմակերպության տարածման հարցը, վորն ապահովեր ամեն մի կոլխոզնիկի շահագործողականությունը՝ իր աշխատանքի արդյունքներով, և աշխատանքի այնպիսի դրումը, վոր հետո այլևս հնարավոր չլինի յեկամուտն ըստ շնչերի բաժանելը»: Դրա համար «1930 թվին—կոլխոզների աշխատանքի ամենազխավոր և ամենակարևոր թերությունը» խորհուրդների 6-րդ համագումարը համարում է՝ «առաջին, կոլխոզային յեկամտի բաժանումը վոչ թե ըստ կոլխոզնիկի աշխատանքի քանակի ու վորակի, այլ ըստ շնչերի, և, յերկրորդ, աշխատանքի անշնորհք ու վատ կազմակերպումը»:

Անցյալ տարվա պրակտիկան ցույց է տվել, վոր այնտեղ, ուր կոլխոզնիկի աշխատանքային մասնակցությունը կոլեկտիվի տնտեսությունը կտրված է յեղել նրա մասնակցությունից՝ կոլխոզային յեկամուտներին, ներկոլխոզային շինարարությունը յեղել է շատ վատ (ցածր յեկամուտ և ցածր ապրանքայնություն, աշխատանքային թույլ դիսցիպլինա, պետության հանդեպ ունեցած պարտականությունների վատ կատարում և այլն): Իսկ այնտեղ, ուր աշխատանքի կազմակերպումը և յեկամուտների բաժանումը դրված են յեղել ուղիղ հիմքերի վրա, մենք կոլխոզների լավ դրությունն ունենք:

Աշխատանքի ուղիղ կազմակերպումը վոչ միայն կոլխոզների ամրապնդման ու կոլխոզնիկների կյանքի նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացման վճռական պայմանն է հանդիսանում, այլև դեպի կոլխոզ նոր հոսանք ստեղծելու կարևորագույն լծակը, համատարած կոլեկտիվացման ու զրա հիման վրա կուլակությունը—վորպես դասակարգ վերացնելու անհրաժեշտ նախադրյալը: Մենատնտեսները—չքավորներն ու միջակները, վոր առ այժմ կոլխոզից դուրս են գրտնվում, բայց ուշագործյամը հետևում են նրա կյանքին, դիտում են կոլխոզային արտադրությունը, ներկոլխոզային կարգերը և այլն,— համոզվելով, վոր աշխատանքը կոլխոզում բավականին մեծ արդյունքներ է տալիս, քան թե մենատնտեսությունում, իրենց կյանքի սոցիալիստական վերակառուցման կողմնակիցներ կդառնան:

Հետևաբար, աշխատանքի ուղիղ կազմակերպման հարցերը շատ կարևոր տնտեսական-քաղաքական նշանակություն են ստանում թե ամբողջ կոլխոզի ու պետության և թե հենց իրա—կոլխոզնիկի ու դեռևս կոլխոզ չմտած չքավոր-միջակային գյուղացիության համար:

Դրա համար ել զարմանալի չէ, վոր ընկ. Ստալինը կոլխոզների աշխատանքը կազմակերպելու հարցը՝ խորհուրդների 6-րդ համագումարի բոլոր հարցերի «մեխն» է անվանել:

Դասակարգային թշնամին—կուլակությունը շատ լավ գիտակցում է աշխատանքի ուղիղ կազմակերպման ամբողջ կարևորությունն ու նշանակությունը, և, կասկած չկա, վոր մեր կոլխոզներից շատերում այսօր նկատվող աշխատանքի կազմակերպման անբավարար վիճակը մենք, շատ կողմերից, «պարտական ենք» հենց կոլխոզների դեմ մղվող կուլակային պայքարին:







Կուլակը, վոր կոլլեկտիվացման հաղթական աճման դեմ արած բացարձակ յեղաթիւններում ջախջախիչ հարված է ստացել (դա դեռ ևս չի նշանակում, վոր նա այժմ էլ «հարմար» դեպքերում չի դիմում բացարձակ յեղաթիւնների), խցկվում և կոլխոզները և նրանց ներսում գաղտնի, վնասատուական աշխատանք է տանում. այդ աշխատանքն ուղղված է, գլխավորապես, գյուղատնտեսական արտելներում աշխատանքի ուղիղ կազմակերպման դեմ: Պետք է խոստովանել, վոր կոլխոզներում աշխատանքի ուղիղ կազմակերպումը՝ կուլակութեան վոչ պակաս կատարել ընդդիմադրութունն է առաջ բերում, քան թե կոլխոզ կազմակերպելու պրոցեսը, թեկուզ կուլակութեան տակտիկան ու մեթոդներն ընդունել են ավելի ծածկված, ավելի քողարկված ձևեր ու հենց դրանով ավելի վտանգավոր են դարձել:

Կոլխոզներում աշխատանքի կազմակերպման նշանակութեան գոյութունն ունեցող թերագնահատումը վոչ այլ ինչ է, յեթե վոչ դասակարգային թշնամուն ոգնելու ձևերից մեկը:

Սորհուրդների 6-րդ համագումարի կողմից հաստատված աշխատանքի կազմակերպման սկզբունքների իրագործումը պահանջում է վճռակաւորեն հաղթահարել կուլակութեան ընդդիմադրութունը, հաղթահարել նաև մեր շարքերում նրա ագենտուրայի—աջ ոպորտունիզմի ընդդիմադրութունը, վորը գլխավոր վտանգն է հանդիսանում ներկա ետապում, վոր աղավաղում է կուլակցութեան ու խորհրդային իշխանութեան գիծը կոլխոզների աշխատանքի կազմակերպման հարցերում: Մենք անգուշ կռնի պիտի մղենք աշխատանքի կազմակերպման հարցերում յեղած ինքնահոսի դրուլթիւնների դեմ, վոր գործնականում սքողում են այդ հարցերի կարեւորութունը, կոլխոզային շարժման ամրապնդման ու աճման համար:

Կոլխոզային պրակտիկայում գոյութուն ունեն նաև «ձախ» ծրուռմներ, վոր արտահայտվում են կոլխոզները մաքսիմալ չափով խոշորացնելու ձգտումի մեջ, առանց հաշվի առնելու անհրաժեշտ պայմանները, միջակի տնտեսափորձն արհամարելու մեջ և այլն:

Այն նվաճումները, վոր մենք ունեցել ենք կոլխոզային շինարարութեան մեջ, ջարդ ու փշուր են արել աջ ուկրոնիստներին, վորոնք գոռում եին և չեին հոգնում գոռալուց, թե կուլակցութունը սխալ քաղաքականութուն է փանում կոլխոզային շինարարութեան մեջ: Կուլակցութունը արագորեն և հաջողութեամբ հաղթահարել և «ձախ» ծուռմներն, վոր կոլխոզային պրակտիկայի մեջ եին քաշում հակամիջակային դրուլթիւններ ու վարչավորելու մեթոդներ: Կուլակցութունն այդ հաջողութունները ձեռք է բերել պայքարելով յերկու ֆրոնտում և դեպի թեքումներն յեղած հաշտվողականութեան դեմ:

«Անցած տարիների կոլխոզային շարժման վճռական արդյունքները կայանում են նրանում, վոր կոլխոզային ուղին ստուգվել է միլիոնավոր գյուղացիների կողմից սեփական փորձով և գնահատվել է, վորպէս միակ ձանապարհը, վորն իրանց ազատում է կուլակային կաշկանդաբից, ու տանում է դեպի կոլխոզային ազատ կյանքը»: (Սորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներից):

«Կոլլեկտիվ, խոշոր տնտեսութեան առավելութունը՝ միատնտեսութեան հանդեպ՝ մինչև իսկ արտադրական միջոցների հասարակ

միացման միջոցով, լիովին ապացուցված է շատ միլիոնավոր չքաւորներ ու միջակների պրակտիկայով, վորոնք կանգնել են կոլլեկտիվացման ու ուղու վրա: Սակայն աշխատանքի արտադրողականութեան բարձրացման ու միաժամանակ նրա թեթևացման այն հնարավորութունները, վորոնք կան խոշոր կոլլեկտիվ տնտեսութեան մեջ, ոգտագործվել են միանգամայն վոչ լրիվ կերպով՝ շնորհիվ կոլխոզների աշխատանքի մի շարք լուրջ թերութունների» (նույն վորոշումներից):

Մոտակա անելիքը կայանում է նրանում, վոր կոլխոզները՝ ճիշտ կազմակերպելով աշխատանքը և յեկամութուններն ուղիղ բաժանելով՝ ել ավելի ամրապնդեն իրենց տնտեսական քաղաքական կարողութունը, բարձրանան ել ավելի բարձր աստիճանի վրա, ուժեղացնելով իրենց վորպէս կուլակցութեան և խորհրդային իշխանութեան գլխավոր հենակետը գյուղում ու հարթեն կուլակին—վորպէս դասակարգ՝ համատարած կոլլեկտիվացման հիման վրա վոչնչացնելու ուղին:

## 2. ԿՈԼԽՈԶՆԵՐԸ ԶԻՆԵՆՔ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆՈՎ

Բանվորական ուժի ոգտագործման պլանը աշխատանքի ուղիղ կազմակերպման յեղակետն է հանդիսանում:

«Պլանը—դա հաշվեառն է.—հաշվեառը—դա պլանն է», «Իրանք յերկու կետերն են, վորոնց վրա մենք պետք է կառուցենք մեր կոլխոզային արտադրութունը»,—ասում է Սորհ. Միութեան Կոլխոզներու նախագահ ընկ. Յուրկինը: Պետք է պարզ ու վորոշ իմանալ, վոր առանց հաշվեառի չկա կոլխոզ, վորպէս կազմակերպված տնտեսութուն: Յեթե խոշոր, կոլլեկտիվ տնտեսութունը, վորն ունի հարյուրավոր աշխատունակ կոլխոզիկներ, տասնյակ ու հարյուրավոր լծկաններ, մեծ քանակութեամբ գյուղատնտեսական ինվինտար, ահագին տարածութեամբ հողեր և այլն, առաջուց հաշվի չառնի իր բոլոր հնարավորութունները և իր տնտեսութունը կազմակերպված, նախորոք գծված պլանով չառնի, նա չի կարող ամրապնդվել ու զարգանալ: Այդպիսի կոլխոզը միայն դեպի քայքայում կարող է գնալ:

Կոլխոզի բոլոր պայմանների, ուժերի, միջոցների ու հնարավորութունների այդպիսի հաշվեառը և այդպիսի պլանը, վորի հիման վրա կարելի կլինի իրացնել նրա բոլոր արտադրական հնարավորութունները, հանդիսանում է կոլխոզի տնտեսական պլանը:

Այդ արտադրական պլանի կարեւորագոյն մասն է հանդիսանում բանվորական ուժի ոգտագործման պլանը: Վերջինս հնարավորութուն է տալիս առաջուց իմանալու, թե կոլլեկտիվ տնտեսութունում յերբ, վորքան և ինչպիսի բանվորական ուժ է պահանջվում, արդյոք, բավականութուն կանն աշխատողները հերկի, մշակման կամ բերքահավաքի տաք ժամանակները, կան, արդյոք, ավելորդ աշխատող ձեռքեր կոլխոզում և այլն: Հետևաբար, բանվորական ուժի պլանավորումն անհրաժեշտ նախադրյալն է հանդիսանում կոլխոզում յեղած ամբողջ բանվորական ուժը լիովին և նպատակահարմար ոգտագործելու համար:

Իժարատարար, մինչ այժմ Աղբրեջանի կոլխոզների մեծամասնութունում, վորպէս կանոն, քացակայում է թե արտելի ամբողջ



տնտեսութեան արտադրական պլանը և թե, մասնավորապէս, բանվորական ուժի պլանային ոգտագործումը:

Բանվորական ուժը ճշգրիտ հաշվեառելու և պլանային ձևով ոգտագործելու համար՝ հարկավոր է ամենից առաջ, ցուցակագրել կոլխոգային բնակչութիւնը.—հաշվել, թե քանի մարդ կա կոլխոգում, նրանցից քանիսն է աշխատունակ, ինչ հասակում են նրանք, ինչ մասնագիտութիւն ունեն, առաջները դրաի աշխատանքի գնացել են նրանք, արդէրը և այլն:

Ամբողջ բնակչութեան այդ հաշվեառից հետո՝ կոլխոգն արդեն կարող է պարզել իր բանվորական որերի (մարդոր) պաշարը՝ թե տարվա և թե ամսվա կամ թե ավելի կարճ ժամանակի համար:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, վոր դրա համար պետք է վերցնել բնակչութեան ամբողջ թվից միայն աշխատունակներին՝ ըստ 3 խմբերի՝ տղամարդկանց, կանանց և դեռահասներին առանձին-առանձին: Լավ կլինի, յեթե բանվորական ուժի պաշարը պարզելիս՝ առանձնացվի մասնագիտութիւն չունեցող կոլխոգիկների թիվը, նույնպէս և այն դրաի աշխատանքի գնացողների թիվը, վորոնք վոչ գյուղատունտեսական մասնագիտութիւն ունեն:

Այդ բանը կարելի է անել, որինակ, հետևյալ ձևով.—

| Աշխատողների խմբերը              | Ամեն մի խմբի աշխատողների թիվը |     |         |
|---------------------------------|-------------------------------|-----|---------|
|                                 | Տղամարդ                       | Կին | Դեռահաս |
| Գյուղատնտ. մասնագիտ. ունեցողներ | 7                             | 2   | —       |
| Մասնագիտութիւն չունեցողներ      | 30                            | 45  | 48      |
| Դրաի աշխատանքի գնացողներ        | 13                            | 5   | —       |
| Ընդամենը .                      | 50                            | 52  | 48      |

Բանվորական որերի ընդհանուր պաշարը հաշվելու համար պետք է տարվա բանվորական որերի թիվը (276 որ) բազմապատկել բոլոր աշխատունակների թվի վրա. ստացված թիվը ցույց կտա, թե տվյալ կոլխոգը քանի բանվորական ուժ կարող է գործադրել ամբողջ տարվա ընթացքում, յեթե բոլոր կոլխոգիկների աշխատանքը լիովին ոգտագործի: Այսպէս, յեթե վերցնենք մեր նախորդ որինակը, վորտեղ 150 աշխատունակ կա, այդ կոլխոգում տարվա ընթացքում կարելի է կատարել ընդամենը 41,000 որ.—աշխատանք (276 × 150). Բաժանելով ստացված թիվը 12-ի մենք կիմանանք ամսական պաշարը.—3,450 բանվորական որ, բաժանելով 24-ի—յերկարթիւն պաշարը.—1,725 բանվորական որ: Նույնպիսի հաշիվ կարելի է անել նաև կոլխոգում աշխատողների ամեն մի առանձին խմբի վերաբերմամբ:

Արդեքեջանի կոլխոգներում՝ բանվորական որերի պաշարը հաշվելիս մինչև վերջին ժամանակներս չափազանց ֆլասակար և սխալ պրակտիկա է յեղել: Մեր շատ կոլխոգներում բանվորական ուժն այնպէս է գործի քաշվել, վոր կոլլեկտիվի արտադրութեանը կոլխոգային ամեն մի ընտանիքից միայն մեկ հոգի, սովորաբար ընտանիքի գլուխն է մասնակցել:

Այդպիսով՝ փաստորեն աշխատանքը լիովին չի յեղել համայնացրած: Այդ ֆլասակար պրակտիկան մեղմում սահմանվել է այն պատճառով, վոր մեր կոլխոգներում անդամութիւնը ձևակերպվել է ըստ ծխի և վոր մեր կոլխոգներում անդամութիւնը անդամութեան արտելի կանոնադրութեան համաձայն, վոչ թե գյուղատնտեսական արտելի կանոնադրութեան համաձայն, ըստ վորի 16 տարեկանից բարձր բոլոր աշխատավորները կարող են արտելին անդամագրվել: Պետք է վճռականորեն և անհապաղ արմատախիլ անել այդպիսի պրակտիկան և լիովին քաշել կոլխոգային աշխատանքի՝ կոլխոգային ամբողջ աշխատունակ բնակչութիւնը, բանվորական ուժի պաշարի մեջ մտցնելով ընտանիքներում յեղած բոլոր աշխատունակ կոլխոգիկներին:

Բացի կոլխոգում յեղած բանվորական ուժը հաշվելուց՝ բանվորական ուժի պլանում պետք է պարզել նաև, թե կոլխոգում վորքան բանվորական ուժ է պահանջվում: Դրա համար անհրաժեշտ է ամբողջ տարվա համար ամիսներով վորոշել, թե տվյալ արտելը ինչպիսի աշխատանքներ է կատարելու և անհրաժեշտ բանվորական որերի քանակը:

Դրա հետ միասին պիտի վորոշել բոլոր աշխատանքների համար մշակման ուղիղ նորմաներ՝ համաձայն տեղական պայմանների և այնպիսի հաշիվ, վոր դրանք վոչ ցածր լինեն, վոչ ել շատ բարձր և ընդհանուր առմամբ համապատասխանեն լավ, բարեխիղճ աշխատող կոլխոգիկի—հարվածայինի որվա մշակման լրիվ նորմային: Տվյալ աշխատանքի (այսքան հեկտար, այսքան ցենտներ և այլն) քանակը բաժանելով մշակման որվա նորմայի վրա կստանանք տվյալ տեսակի աշխատանքի համար անհրաժեշտ բանվորական որերի քանակը:

Որինակ.—Ասենք, թե կոլխոգն 800 հեկտար բամբակ պիտի քաղահանի. յեթե 1-ին քաղահանի համար մի մարդու որվա մշակման նորմա է ընդունված  $\frac{1}{8}$  հեկտար, ամբողջ աշխատանքի համար հարկավոր է 6,400 բանվորական որ ( $800 : \frac{1}{8} = 6,400$ ):

Կամ, պարզ ասած՝ մեկ հեկտարի համար հարկավոր է 8 բանվորական որ, իսկ 800 հեկտարի համար կպահանջվի 800 անգամ ավելի, այսինքն 6,400 բանվորական որ ( $800 \times 8 = 6,400$ ):

Այդպիսով հաշվելով անհրաժեշտ բանվորական ուժի քանակը բոլոր մյուս աշխատանքների համար, վոր պիտի կատարվեն ամբողջ տարվա ընթացքում, և գումարելով դրանք, մենք կստանանք տվյալ տարվա բոլոր աշխատանքների կատարելու համար անհրաժեշտ մարդորերի ընդհանուր քանակը:

Այդ հաշիվներն արվում են արտադրական պլանի կազմելիս. յեթե այդ պլանը կազմված է մտածված կերպով, վորոշակի՝ կոլխոգիկների կողմից մանրամասն քննված է և այլն, արդեն կանխորոշում է տվյալ կոլխոգի արտադրական կյանքը, զգուշացնում է նրա ավելորդ նյութական միջոցներ ու բանվորական ուժ կորցնելուց, ապահովում է աշխատանքները ժամանակին կատարումը:



Արտադրական պլանը կյանքում իրագործելու համար պետք է կազմել ավելի հասարակ, աշխատանքային որացուցային պլաններ՝ ըստ առանձին սեգոնների կամ ըստ առանձին կամպանիաների: Որինակ, պետք է կոլխոզի համար ունենալ աշխատանքային որացուցային պլաններ ցանքային, մշակման, բերքահավաքի և այլ սեգոնների համար առանձին-առանձին: Նրանցում մանրամասն պետի նշվի, թե վոր աշխատանքները, վորքան քանակությամբ և վորքան ժամանակում պետի կատարվեն: Մենք տեսանք, վոր աշխատանքի քանակը բաժանելով մշակման նորմայի վրա կստանանք, թե քանի բանվորական որ և անհրաժեշտ՝ տվյալ աշխատանքը կատարելու համար: Յեթե ստացված բանվորական որերի թիվն այժմ բաժանենք այն թվի որերի վրա, վորոնց ընթացքում այդ աշխատանքը պետք է կատարվի, մենք կստանանք, մի թիվ, վորը ցույց կտա, թե կոլխոզն որակավոր քանի բանվորական ձեռք պետի տա՝ տրված աշխատանքը պլանով վորոշված ժամկետին կատարելու համար:

Դառնանք մեր որինակին: Մենք գիտենք, վոր 800 հեկտար բամբակի 1-ին քաղհանի համար հարկավոր է 6,400 բանվորական որ: Յեթե այդ աշխատանքը կատարելու ժամկետը կոլխոզի աշխատանքային պլանով սահմանված է 20 որ, այն ժամանակ 6,400-ը բաժանելով 20-ի կստանանք 320, դա ցույց է տալիս, վոր 1-ին քաղհանը ժամանակին կատարելու համար կոլխոզը պետք է այդ աշխատանքին հանի որական 320 բանվոր՝ ըստ որվա ընթացքում, յեթե կոլխոզնիկի մշակման որվա նորման չանցնի աշխատանքային պլանով ընդունվածից ( $800 : \frac{1}{20} = 6,400, 6,400 : 20 = 320$ ):

Ճիշտ նույն կերպ պետք է հաշվել բանվորական ձեռքերի որական քանակը՝ տվյալ սեգոնի բոլոր մնացած աշխատանքների վերաբերմամբ:

Գումարելով բանվորական ձեռքերի այդ որական քանակը կստանանք, թե կոլխոզն այդ սեգոնում, վորի համար կազմված է որացուցային պլանը, որական վորքան աշխատող պետի հանի:

Այդպիսի պլանը ցույց կտա նաև բանվորական ուժի լարման աստիճանը՝ սեգոնի այս կամ այն ժամանակաշրջանի ընթացքում, նրա ավելացումը և պակասումը:

Կոլխոզային ծխի բեռնավորման պլանը սահմանելիս՝ կոլխոզները պետք է հաշվի առնեն բանվորական ուժի այն քանակը, վոր անհրաժեշտ է նրա անհատական անտեսության չհամայնացրած մասը սպասարկելու համար, սակայն, այն պայմանով, վոր առաջնահերթությամբ անպայման տրվի կոլխոզային աշխատանքներին:

Մասնաշաղկապ լարված աշխատանքների—ցանքային, քաղհանի, բերքահավաքի և այլն ժամանակաշրջանում՝ այդ աշխատանքները կատարելու աշխատանքային պլանում վորոշվում է ամեն մի կոլխոզնիկի կամ կոլխոզային ծխի միևնույն աշխատանքային բեռնավորումը, նրանց հասցնելով այդ բեռնավորումը:

Այդպիսով կազմված կոլխոզի աշխատանքային ծրագիրը կլինի «աշխատանքների այն կոնկրետ պլանը, այն հուշատետրը, վորով պետք է ճիշտ գործի վրձ միայն կոլխոզը, այլև ամեն մի բրիգադ, ամեն մի կոլխոզնիկ և այդ հուշատետրով ամբողջ ժամանակ պետի իրեն պահի

արտադրական լարման մեջ, վորպեսզի ամեն մի աշխատանքը կատարվի վորոշ ժամկետին» (Յուրկին):

Բանվորական ուժի պլանավորումը ջանքատեղ հարված կհասցնի այդ հարցում յեղած ինքնահոսին և բանվորական ուժը գիշատիչ կերպով շտալիելուն, այդ բանը փոխարինելով բանվորական ուժի կազմակերպման ու դասավորման նախապես գծված պլանով:

### 3. ԱՇԽԱՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Արտելի անտեսությունում կոլխոզնիկի դրած աշխատանքի քանակն ու վորակը կորոշի, թե նա վորքան բաժին պետի ստանա կոլխոզային յեկամություն: Վորքան շատ աշխատանք դրվի, ահաբանել շատ կլինի այդ բաժինը և ընդհակառակը: Դրա համար ել կոլխոզնիկների միջև աշխատանքը բաժանելու հարցը մեծ քաղաքական և անտեսական նշանակություն է ստանում:

Աշխատանքի բաժանման հիմքը հանդիսանում է առեկի բոլոր առևտրական անդամներին լիովին աշխատանքով բեռնավորելու սկզբունքը: Դրա համար ել աշխատանքը կոլխոզային ծխերին ըստ շահերի բաժանելը ուղիղ չէ: Դա, մի կողմից, լիովին չի բեռնավորում բանվորական ուժը և կոլխոզային բնակչության աշխատունակ մասը, մյուս կողմից ել, կարող է պատահել, վոր քիչ աշխատունակ անդամներ ունեցող բազմաթիվ ընտանիքները չկարողանան իրենց բաժին ընկած ամբողջ գործը կատարել և հենց դրանով կխախտեն պլանային առաջադրությունները:

Սակայն, կոլխոզնիկների միջև աշխատանքները բաժանելիս չի կարելի ինկատի չունենալ այն դժվարությունը, վորի մեջ են ընկնում բազմաշունչ ընտանիքները:

Պրակտիկայում, սովորաբար, այդպիսի բազմաշունչ ընտանիքներն առաջին հերթին են աշխատանքով բեռնավորվում, կամ նրանց տրվում են վորոշ առավելություններ աշխատանքները բաժանելիս, այնպես վոր, նրանք ապահովված լինեն ավելի մեծ աշխատանքային բեռնավորումով, վոր հնարավորություն ունենան ձեռք բերելու կենսական յեկամտի միևնույն: Մի ուրիշ ձևն է կոլխոզում անաշխատունակների համար հատուկ ֆոնդ ստեղծելը: Պրակտիկայում գործադրվում է նաև մեկ և մյուս ձևերի միացումը:

Այդ, այն արտեղներում, ուր բանվորական ուժի ավելցուկներ կան, պետք է հաշվի առնել կոլխոզնիկ չբավորների ու բատրակների շահերը, վորոնք, սովորաբար, չունենալով անտեսության չհամայնացրած մաս, չեն կարող այնտեղ գործադրել կոլխոզային աշխատանքից ազատ բանվորական որերը, հետևաբար, ուրիշ յեկամուտ չունեն, բացի կոլխոզայինից: Միջակ-կոլխոզնիկն, ընդհակառակը, կարիք ունի իր աշխատանքի վորոշ մասն իր անտեսության անհատական մասում գործադրելու և ոգավում է նրա յեկամուտներից: Ուստի, այդպիսի դեպքերում անհրաժեշտ է առաջին հերթին բեռնավորել բատրակ-չբավորական անտեսությունները, միաժամանակ թույլ չտալով անգիտության և անուղադրություն մատնելու միջակին, վորին, ընդհակառակն,



ամեն կերպ պետք է հնարավորություն տալ իր տնտեսական փորձը կոլխոզում ամենանպատակահարմար կերպով գործադրելու:

Իրա հետ միասին,—ինչպես ասում են Համամիութենական կոլխոզային խորհրդակցությունները,—ավելի մշտական բնույթ ունեցող աշխատանքները պետք է տրվեն առաջավոր կոլխոզներին, վորոնք իրենց ցույց են տվել գործադրելով աշխատանքի սոցիալիստական ձեվերը՝ սոցմրցումն ու հարվածայնությունը՝ և աշխատանքի լավագույն քանակական ու վորակական ցուցանիշներ են հանդես բերել:

#### 4. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԱՎԵԼՅՈՒԿԻ ՅԵՎ ՊԱԿԱՍՈՐԴԻ ՄԱՍԻՆ

Կոլխոզի բանվորական ուժի պլանավորումը նրան հնարավորություն է տալիս նախորոք պարզելու, թե գյուղատնտեսական տարվա վրա ժամանակաշրջանում և վորքան բանվորական ուժ է ավելանում կամ պակասում արտելի տնտեսությունում:

Կարելի է առանց սխալվելու ասել, վոր շնորհիվ գյուղական տնտեսությունից աշխատանքների սեղոնականություն, մեր կոլխոզները, մինչև իսկ ամենից շատ աշխատանք կլանող մշակութային կոլխոզները, հնարավորություն չունեն ամբողջ տարին լիովին ոգտագործելու իրենց անդամների աշխատանքը և համայնացրած լծկանները: Մեր կոլխոզների կյանքից վերցրած փաստերն այդ բանն են ապացուցում:

Գոյություն ունի աշ ոպորտունիստական «թերիա» այն մասին, իբր թե գյուղի կոլեկտիվացումը վերացնում է բանվորական ուժի ամեն մի ավելցուկը գյուղական տնտեսությունում: Դա միանգամայն սխալ է: Այդ կեղծ «թերիայի» հիմք է ծառայում վոչ պակաս կեղծ պրակտիկան: Բանը նրանումն է, վոր մինչև վերջին ժամանակներս մեր կոլխոզներում տիրապետել է՝ բոլոր կոլխոզիկների միջև աշխատանքի ներքավ քամաչափ բաժանման ձգտումը, առանց հաշվի առնելու, թե, արդյոք, նրանք լրիվ բեռնավորվում են թե վոչ: Այստեղից էլ ստեղծվել է այն կեղծ տպավորությունը, վոր իբր թե մեր կոլխոզներում նրանց բոլոր անդամներն արտագրությունում զբաղված են ամբողջ տարին:

Աշխատանքի համայնացումը վոչ միայն չի կրճատում բանվորական ուժի ավելցուկները, այլ, ընդհակառակը, նա նպաստում է բանվորական ուժի ազատվելուն:

Վորքան լավ լինի կազմակերպված աշխատանքը մեր կոլխոզներում, վորքան ավելի մեքենայացրված լինի գյուղա ան տնտեսություններն, այնքան աչքի ընկնող կլինին բանվորական ուժի ավելցուկները:

Կոլխոզների խնդիրները և շահերը կայանում են վոչ թե նրանում, վոր ամենամեծ չափով տնտեսն բանվորական ուժի ապալույուն ծախսումը՝ կոլխոզի աշխատողներին ամենամեծ չափով բեռնավորելու միջոցով: Պետք է արմատորեն և ինչև վերջը վոչնչացնել մեր կոլխոզի միադումներում բանվորական ուժը գիշատիչ կերպով շոայելու պրակտիկան:

Կոլխոզներն ինչպե՞ս են կարող և ինչպե՞ս պետք է ոգտագործեն բանվորական ուժի իրենց ավելցուկները:

Առաջին՝ դա կարելի է անել ընչ աշխատանք պահանջող մշակութային կոլխոզները փոխելով ավելի աշխատանք պահանջող մշակութային կոլխոզներով (բամբակ, ծխախոտ՝ Ադրբեջանի ցածրադիր մասերում, բանջարաբուծություն, այգեգործություն և անասնապահություն՝ նախալեռնային ու լեռնային ռայոններում և այլն):

Յերկրորդ՝ կոլխոզները պետք է լայնորեն ծավալեն կառուցողական աշխատանքները՝ թե ճանապարհային և թե տնտեսական-կուլտուրական շենքերի: Պետք է վորոշակի ասել, վոր կառուցումներն հարցերում Ադրբեջանի կոլխոզները, բացի սակավ բացառություններից, համարյա վոչինչ չեն անում: Այնինչ, համարյա բոլոր կառուցողական նյութերը (քար, աղյուս, յեղեգն ու տեղական փայտ և այլն) բավական քանակությամբ կան: Կառուցողական աշխատանքների ծավալումը, վոր կոլխոզների համար հսկայական նշանակություն ունին՝ նրանց տնտեսական ու քաղաքական ամրապնդման տեսակետից, կկանխ վոչ ընչ բանվորական ձեռքեր, վորոնք ազատվում են կոլխոզային արտագրությունից, մանավանդ ձմեռային և գարնանային ժամանակաշրջաններում:

Յերրորդ՝ կոլխոզներից շատերի համար միանգամայն ռեալ հնարավորություններ են ներկայացնում ոժանդակ ձեռնարկների ու կուստարային զբաղմունքների կազմակերպումը (գորգագործական, բրուտային, ջրաղացներ և այլն), իրենց բանվորական ուժի, մանավանդ կանանց ավելցուկն ոգտագործելու նպատակով:

Վերջապես, չորրորդ՝ ծավալվող սոցիալիստական շինարարությունում տարեց-տարի ավելի ու ավելի սեղոնային բանվորական ուժ է պահանջում: Սոցիալիստական շինարարությունը տալ աշխատողներ—դա կոլխոզների առաջնահերթ պարտականությունն է: Զպիտի մոռանալ, վոր արդյունաբերության աճումից է կախված կոլխոզների աճումը ու ամրապնդումը:

Իրա համար ել վոչ միայն չպետք է հակառակել դուրսն աշխատանքի գնալուն, այլ, ընդհակառակն, ամեն կերպ խրախուսել՝ կոլխոզում չոգտագործվող բանվորական ուժի բոլոր ավելցուկները դրսում աշխատանքի գնալու:

Այդ բանը պիտի արվի կազմակերպված կարգով: Ուստի, կոլխոզը՝ ռայկոլխոզմիություն միջոցով՝ պիտի կանխորեն հոգա իր անդամներին դրսի աշխատանքի ուղարկելու գործը կազմակերպելու մասին, պարզելով՝ թե վորտեղ, վորքան, ինչ վորակավորման ու ինչ ժամանակաշրջանում նրանք կաշող են աշխատել, և համապատասխան պայմանագիր կնքի Աշխոդկումատի որգանների կամ տնտեսավարների հետ: Այն կոլխոզիկը, վորը դրսի աշխատանքի է գնում, իր աշխատածից 3—10% պետք է տա կոլխոզին. կառուցողական այն աշխատողներից, վորոնց կարիքն առանձնապես զգացվում է աշխատանքի շուկայում, այդ հատկացումը 3%-ից ավելի չպիտի վերցնել:

Իրսում աշխատանքի գնալու հետ միասին կոլխոզը կարող է կազմակերպել քրեհատարություն՝ կոլխոզում յեղած ավելցուկ լծկան ուժի ոգտագործելու նպատակով: Յեթե կոլխոզիկը քրեհ է տալում կոլխոզի ձիով և ձիուն ինքն է կերակրում, կոլխոզին տալիս է իր ստացածի 30—40%-ը, իսկ յեթե կոլխոզն է կերակրում—60%:





Պիտի մատնանշել, վոր մեր կոլխոզները պրակտիկայում դուրսն աշխատանքի դնալը կատարվում է միանգամայն ինքնաճանաչմամբ: Բացի դրանից, մի քանի ռաշիոններում դուրսն աշխատանքի դնալու գործում ծուղանք կան: Այդ ծուղանքը կայանում են նրանում, վոր կոլխոզները փոխանակ կոլխոզին հասնող վորոշ տոկոսը տալու, իր ամբողջ աշխատածն է տալիս, իսկ կոլխոզը նրան այնքան աշխատանքի որ է գրում, վորքան վոր կոլխոզները դուրսն է յեղել: Այդպիսով կոլխոզների անձնական շահագրգռվածությունը դուրսն աշխատանքի դնալու վերաբերմամբ կորչում է խախտվում և գյուղատնտեսական արտելի հիմնական սկզբունքը, յեկամանքը բաժանելու և աշխատանքի դնանա-տուլթյան վերաբերմամբ:

Աղբերջանի բամբակային կոլխոզները գտնվում են առանձնահատուկ դրուլթյան մեջ: Շնորհիվ բամբակի մշակույթի շատ աշխատանք կլանելուն և մշակման ու բերքահավաքի ժամանակ բանվորական ուժի մեծ լարվածության՝ Աղբերկուկուսի (բ) կենտրոնական վերահսկիչ Հանձնաժողովը ու Բանվորագետնությունից ժողովմատի կոլլեգիան իրենց՝ սույն տարվա մայիսի 6-ի վորոշմամբ ասում են, թե պետք է ձեռնպահ մնալ 1931 թվին բամբակային ռաշիոններում դուրսն աշխատանքի դնալու գործը կազմակերպելուց:

Յեթե բանվորական ուժի հաշվետու պլանում կոլխոզը՝ փոխա-նակ բանվորական ուժի ավելցուկի՝ պակասող ունի, նա պետք է որ առաջ հոգա այն ուղիների և միջոցների մասին, վորոնց ոգնուլթյամբ կարելի է այդ պակասը լրացել հարկավոր ժամանակաշրջանում:

Պարզ է, վոր բանվորական ուժի պակասը լրացնելու լավագույն միջոցն է կոլխոզ քաշել բատրակա-չքավորական և միջակային նոր տնտեսություններ:

Դրա հետ միասին մի շարք միջոցներ կան կոլխոզներին բան-վորական ուժի պակասը լրացնելու համար՝ հենց կոլխոզներում:

Առաջին՝ կոլխոզներին աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու միջոցով, նրանց նյութական շահագրգռվածությունը մեծացնելով՝ իրենց աշխատանքի արտադրանքի վերաբերմամբ (գործա-րքի հետ միասին սահմանելով պրեմիալ սրտում և այլն):

Յերկրորդ՝ ամ նից ավելի լարված ժամանակաշրջանում բանվորական որը յերկարացնելով 12—14 ժամ, այն պայմանով, վոր պակաս լարվածություն ժամանակ այդ ժամանակավոր յերկարացումն հատուց-վի բանվորական որվա տուլթությունը հասցնելով 8 և պակաս ժամի:

Յերրորդ՝ լիովին ոգտագործելով կոլխոզի չոգտագործվող աշխա-տանքային ռեսուրսները (բոլոր կանանց, գեղահասակներին աշխատանքի քաշել):

Չորրորդ՝ ռաշիոնալացման միջոցառումներ ձեռք առնելով գյուղատնտեսական մեքենաներն ոգտագործելու և արտադրական պրոցես-սի վերաբերմամբ (2 և 3 հերթի աշխատանք մտցնել, մի շարք աշխա-տանքներ, որինակ կառուցողական և այլն կատարել պակաս լարված ժամանակաշրջանում, աշխատել և ձմեռը կատարել մի շարք գյուղատնտե-սական աշխատանքներ, վոր թեթևացնում են գարնանային ցանք-աշխատանքներ, որինակ՝ ցել, ձմերային արաթ և այլն):

Հինգերորդ՝ ամենալայն կերպով ծավալելով աշխատանքի սոցիա-լիստական ձևերը, հարվածայնությունը, սոցմրցումը, առաջավոր բրիգադների կողմից հասարակական բուքսիր հետաճանաչություն և այլն, — վոր հսկայական դեր են խաղում աշխատանքի արտադրողականու-թյունը բարձրացնելու գործում:

Բացի ներկոլխոզային այդ միջոցներից և ուժերից՝ անհրաժեշտ է նաև կազմակերպել միջկոլխոզային փոխադարձ ոգնուլթյուն—բան-վորական ուժի ավելցուկ ունեցող կոլխոզների կողմից՝ կարելի ունե-ցող կոլխոզներին: Ընդ սմին, այն կոլխոզներին, վոր ոգնուլթյան են գնում ուրիշ կոլխոզներ, աշխատանքները վերջացնելուց հետո պետք է ստանան միջին վարձը՝ հարևան կոլխոզներում գոյուլթյուն ունեցած չափերով:

## 5. ՊԱՅՔԱՐԸ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ—ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Գործարքայնությունը գործադրելիս՝ բացի աշխատանքի քանա-կական կատարումից՝ անհրաժեշտ է նաև ուղադրություն առնել նրա վորակական կողմը: Դա առանձնապես կարևոր է, վորովհետև կոլխոզ-ներին շատ աշխատողներ ստանալու համար աշխատանքի քանակի հետևից ընկնելով՝ կարող են նրա վորակը վատացնել, կարող են ան-բարեխիղճ վերաբերմունք ցույց տալ կոլխոզի արտադրական միջոց-ներին՝ գյուղատնտեսական ինվենտարին, լծկաններին և մյուս գույ-քին:

Այստեղից, սակայն, չի կարելի այնպիսի յեզրակացություն հա-նել, վոր իբր թե գործարքի ժամանակ չի կարող աշխատանքը բարձր վորակ ունենալ: Դա ճիշտ չէ, վորովհետև գործարքայինը պիտի հաշվի առնի, վոչ միայն թե վորքան աշխատանք է կատարված, այլև թե ինչ-պես է կատարված:

Գործարքայինը կարելի է և պետք է կազմակերպել թե աշխա-տանքի քանակի և թե վորակի համար: Կոլխոզները պիտի խմանա՝ աշ-խատող ստանալու համար նա պետք է այս կամ այն աշխատանքը կատարի—այսքան քանակությամբ և այսպիսի վորակով:

Դրա համար անհրաժեշտ է, վոր կոլխոզներն անցնելով գործար-քային աշխատանքի, իսկույն հոգան վորակական նորմաներ սահմանե-լու մասին (որինակ՝ հերկի խորությունը, հերկի ժամանակ թույլա-տրելի խարակների աստիճանը, սերմի ցանքելու նորմաները, քաղհանի մաքրություն և բամբակի քաղի աստիճանը և այլն): Պետք է խիստ հսկողություն սահմանել, թե արտելի անդամներն ինչպես են վերաբե-րում գյուղատնտեսական ինվենտարին ու անասուններին: Պետք է սոցմրցում ծավալել աշխատանքի վորակի վերաբերմամբ, հարվածայ-նությունը կապել գյուղատնտեսական մեքենաներին, գործիքներին և անասուններին խնամքով վերաբերվելու հետ: Աշխատանքի բարձր վո-րակը խրախուսելու նպատակով կոլխոզները պետք է պրեմիաների սրտեմը մտցնեն, պրեմիալ ֆոնդեր ստեղծեն և, ընդհանրապես, վատ աշխատանքի, գյուղատնտեսական ինվենտարը փչացնելու և անասուն-ներին վատ վերաբերվելու համար՝ պետք է տուգանումներ խիստ մի-



Ջոցներ սահմանեն (հասարակական հանդիմանություն, գնահատումների պակասացում, ցածր կատեգորիայի աշխատանքի փոխել, դատարան, կոլխոզից հեռացնել):

Իբրև որինակ կարելի է բերել պրեմիա տալու հետևյալ դեպքերը՝ թե բրիգադներին և թե անհատական—ժամկետը կրճատելու և պլանը կատարելու համար (կատարում և գերակատարում, քանակական և փորակական ցուցանիշներ), լծկանների վորակական գրություն պահպանման և բարձրացման համար (աշխատունակություն, առողջություն, գիտություն և արտաքին տեսք), վառելիքի և այլ նյութերի անտեսման, գյուտերի, կատարելագործությունների և տնտեսությունը լավացնելու վերաբերմամբ արվող արժեքավոր առաջարկների համար:

Պրեմիաներ տալ կարելի է ամենաբազմազան ձևերով՝ փողով, պակասորդ ապրանքներով, կուրսեր, եքսկուրսիաներ ուղարկելով, պատասխանատու աշխատանքի առաջ քաշելով և այլն:

Վորակի համար մղվող պայքարը պետք է զբվի կոլխոզային կյանքի ուղղորդության կենտրոնում: Վորակը—կոլխոզիկների աշխատանքի հիմնական մեխանիզմ:

## 6. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Արտելի անդամների միջև աշխատանքի ուղիղ բաժանումը կարելի է վորագույն պայման է հանդիսանում նրա արտադրողականությունը բարձրացնելու գործում—կոլխոզի արտադրանքի քանակը մեծացնելու և վորակը բարձրացնելու գործում: Մասնագիտացումն այն հիմնական սկզբունքն է, վորով պիտի առաջնորդվեն մեր կոլխոզիկներն՝ արտադրության մեջ բանվորական ուժը դասավորելիս: Կոլխոզիկներին պիտի դասավորել այնպես, վորպեսզի նրանցից ամեն մեկն, ըստ հնարավորության մշտական աշխատանք ունենա տարվա, պեղոնի, գյուղատնտեսական վորոշ կամպանիաների ընթացքում և այլն:

Այդպիսի դասավորումը շատ բաներում կուպի բարձրացնելու կոլխոզիկների վորակավորումը և մասնագիտանալու գյուղատնտեսության այս կամ այն ճյուղում: Սակայն, մեր Արբելեյանի կոլխոզներում այդ հարցի վերաբերմամբ գոյություն ունեցող պրակտիկական շատ սուր կերպով հակասում է մասնագիտացման և կոլխոզիկներին՝ վորոշ տեսակի աշխատանքներին ամրացնելու հիման վրա՝ աշխատանքի բաժանման սկզբունքին:

Մեր շատ կոլխոզներում աշխատանքի բաժանման հիմունք է ընդունվում ճեքակալանություն սկզբունքը, այսինքն աշխատանքների այնպիսի կազմակերպում, յերբ միևնույն աշխատանքին հերթով մասնակցում են, համարյա թե, բոլոր կոլխոզիկները: Դա շատ ֆլասակար յերևույթ է: Այստեղից բխում է ունեցած վորակյալ բանվորական ուժի վոշ ռացիոնալ ոգտագործումը և կոլխոզիկները հնարավորություն չեն ունենում մասնագիտանալու վորոշ տեսակի աշխատանքում: Իսկ դա հավասարազոր է այն բանին, վոր կոլխոզում աշխատանքի արտադրողականությունը միշտ կմնա միևնույն ցածր աստիճանի վրա: Նրա արտադրանքի վորակը յերբեք չի լավանա և այլն:

Անհրաժեշտ և ամենաշտապ կարգով կազմակերպել աշխատանքի բաժանումը մասնագիտացման և ամրացման հիմունքով, արմատապես վոջնացնելով հերթականության ֆլասակար պրակտիկան:

Դրա համար անհրաժեշտ է, ամենից առաջ, ջոկել կոլխոզիկները վորոշ կազմ, վորոշ պետք է գործեն կոլխոզի տնտեսության այս կամ այն ճյուղում, յեթե այդ տնտեսությունը մենամշակույթային չե (քամակարուծություն, հացահատիկային մշակույթներ, անասնապահություն, ալիգործություն, բրնձի մշակույթ և այլն): Այդ աշխատողներն ամրացվում են կամ մշտական աշխատանքների (ճյուղերի վարիչներ, ձրապաններ, անասնապահներ, կթողներ, սալապաններ, և այլն) կամ սեզոնային աշխատանքների (հերկողներ, ցաքանողներ, ցանողներ, քաղհանողներ, բերքը խնամելու և հավաքելու վրա աշխատողներ և այլն): Ընդ մին, անհրաժեշտ է սեզոնային աշխատանքների վերաբերմամբ այնպիսի կարգ սահմանել, վոր ամեն անգամ, յերբ վերսկսվի տվյալ աշխատանքը, աշխատանքի բաժանումը տեղի ունենա նույն աշխատողների միջև, վորոշ կատարել են անցած անգամ:

Ունեցած բանվորական ուժի մեր ցույց տված ձևով առաջուց հաշվետուներ շնորհիվ և կոլխոզային արտադրության մեջ նրա պահանջը հաշվի առնելով՝ արտելը հեշտությամբ կարող է վորոշել, թե տնտեսության ամեն մի ճյուղում քանի մարդ է պահանջվում և վորքան ժամանակով:

Ամեն մի ճյուղում կոլխոզիկներից կազմակերպվում են բրիգադներ: Ինչպես ցույց է տալիս կոլխոզային պրակտիկան, բրիգադները արտելներում աշխատանքը կազմակերպելու և բանվորական ուժը դասավորելու ամենալավ ու ամենակենսական ձևն է:

Բրիգադների ուղիղ կազմակերպումը կարևորագույն պայման է հանդիսանում հաջող աշխատանքի համար: Նրա նշանակությունը վրձնական է: Նա պիտի լինի կոլխոզի տնտեսության սկզբնական արտադրական բջիջը և հենց զբանով՝ կոլխոզային շինարարության ու աշխատանքի կազմակերպման հիմք:

Ինչպես կազմակերպել բրիգադներ:

Վորոշ են այն հիմնական սկզբունքները, վորոնցով կոլխոզը պիտի առաջնորդվի բրիգադներ կազմակերպելիս:

Բրիգադը կազմակերպվում է ըստ գործի բնույթի՝ արտադրական ցուցանիշով, համաձայն այն աշխատանքի պահանջների, վորի համար կազմվում է: Ուստի չպետք է լինի մարդկանց հառարակ համախմբում, որինակ, ըստ տրիտորիալ ցուցանիշի (բրիգադ-ձիւր), մշտական թրվով («տասնյակներ») խմբակ, այլ կոլխոզիկների բնությունը վորոշ աշխատանքի համար. (որինակ՝ բրիգադ՝ բամբակը ջրելու, լծկաններին խնամելու, ինվենտարը նորոգելու և այլն):

Մեր կոլխոզների անելիքը կայանում է նրանում, վորպեսզի միանգամայն ընդ միշտ արմատախիլ անեն աշխատանքի կազմակերպման այդ շատ ֆլասակար պրակտիկան («բրիգադ-ձիւր» և «տասնյակներ»), վորն արգելք է հանդիսանում կոլխոզիկների աշխատանքի ճիշտ և լիովին ոգտագործելուն:

Բրիգադներ կազմակերպելու գործում մեր կոլխոզների մյուս մեծ թերությունը կայանում է նրանում, վոր բրիգադների կազմը հոսուն



ե րինում: Այդ յերևույթի փաստակարարությունը բոլորին հայտնի է. դա խախտում է մասնագիտացման սկզբունքը, թուլացնում է աշխատանքային դիսցիպլինան, փչացնում է աշխատանքի արտադրողականությունը և այլն:

Անհրաժեշտ է անհապաղ վերջ տալ հոսանքառաջացմանը, կոլխոզներին շուտ-շուտ մի բրիգադից մյուսը փոխելուն, ամեն կերպ ապահովելով բրիգադի կազմի կայունությունը՝ նրա գործունեությունը ամբողջ ընթացքում:

Բրիգադները՝ նայած աշխատանքին՝ կազմակերպվում են կամ կապակցված, իրար հետ շաղկապված մի քանի աշխատանքներ կատարելու համար (որինակ՝ միասնական բրիգադ հերկի, ցաքանելու և ցանքսի համար կամ հնձի, կրելու և կալսելու համար) կամ մասնագիտացված, միայն մի տեսակ աշխատանք կատարելու համար (հերկի, ջրելու, քաղհանի, բամբակաքաղի, խաղողաքաղի խնամելու, կաթնատու անասունները խնամելու համար և այլն):

Բրիգադները կարող են լինել՝ մշտական, սեզոնային և ժամանակավոր: Մշտական բրիգադները կազմակերպվում են ամբողջ տարին, որինակ՝ անասնապահությունում: Սեզոնային բրիգադները կազմակերպվում են այն ժամանակ, յերբ աշխատանքը շարունակվում է գյուղատնտեսական տարվա միայն մի կամ մի քանի սեզոններում: Ժամանակավոր բրիգադները կազմակերպվում են միայն այն աշխատանքների համար, վորոնք ժամանակավոր բնույթ ունեն:

Սեզոնային բրիգադները ցրվում են աշխատանքները վերջացնելուց հետո և նրանց կազմից ձևակերպվում են նոր բրիգադներ՝ արտադրության նոր պահանջների համաձայն: Ընդ սմին, ինչպես մատնանշել ենք, տրված բրիգադի աշխատանքը վերսկսվելու դեպքում, պետք է բրիգադ կազմել նույն կոլխոզիկներին, վորոնք անցյալում մասնակցել են նույնպիսի աշխատանքի, նպատակ ունենալով մասնագիտացումը և աշխատանքի արտադրողականությունը բարձրացումը: (Որինակ՝ 2-րդ և հետագա վոտգման բրիգադները կազմվում են նույն կոլխոզիկներին, վորոնք մասնակցել են առաջին վոտգմանը):

Բրիգադի մեծությունը կախված պիտի լինի կատարելիք աշխատանքի սեռակից և քանակից, կատարման ժամկետից, այդ աշխատանքի համար կոլխոզի ունեցած ինվենտարից և քարշառժից (ջրելու աշխատանքներում՝ ջրային սխտեմի ուժից) ու մեակման այն նորմաներից, վոր կոլխոզն ընդունել է տրված աշխատանքի պայմանների համաձայն (հեռավորությունը, աշխատանքի համախմբվածությունը, ջրի, սերմի և այլ նյութերի գտնված տեղի հեռավորությունը, մեքենաների արտադրողականությունը, լժկանների գրությունը և այլն):

Բոլոր դեպքերում՝ բրիգադների կազմը վորոշելիս այնպես պիտի անել, վոր նրանցում վոչ ավելորդ բանվորական ուժ լինի, վոչ էլ գործը կանգնի բանվորական ուժի պակասության պատճառով:

Մի բրիգադայի անդամների ընդհանուր թիվը շատ մեծ չպիտի լինի: Ամենից լավ է բրիգադներ ունենալ 15-20-30 հոգուց կազմված (կախված աշխատանքների տեսակից, ճյուղից), վորպիսով նա դառնա կոլխոզիկների ամենամեծ չափով շարժուն, ձկուն մի ջոկատ՝ գյուղատնտեսական արտադրության տվյալ ճյուղի առանձնահատուկ պահանջ-

ները բավարարող (որինակ՝ ջրելու, կրկնավարի, ցաքանելու և ցանելու ժամանակ՝ յերբ հողն արաթից դուրս է գալիս մաս-մաս, բերքը հավաքելիս և այլն): Իացի դրանից, իմոհ: Ագրբեջանի ժամանակակից պայմաններում, յերբ կոլխոզները մեծ չեն, առանձնապես խիստ կերպով զգացվում է կոլխոզային կադրերի քչությունը և կոլխոզային շինարարության փոքր փորձառություն ունենք, — այդպիսի վոչ մեծ բրիգադները հեշտացնում են նրանց կառավարելու, նրանց աշխատանքին հսկելու և հաշվհառելու և այլն գործը:

Դաշտագործության մեջ չի հանձնարարվում բրիգադներն ամրացնել վորևե հողամասի՝ դաշտային աշխատանքների բոլոր պրոցեսները կատարելու համար (հերկից սկսած մինչև բերքը հավաքելը՝ ներառյալ): Բրիգադը, վորպես արտադրական բջիջ, պետք է լինի կոլխոզի շարժուն մասը: Բրիգադները հողամասերին ամրապնդելը նպատակահարմար է անել ավելի կարճ ժամանակով, սովորաբար, սեզոնային-մասնայական աշխատանքների ժամանակ, յեթե դրանք մեքենայացրված չեն (որինակ՝ բամբակը քաղհանելիս ու հավաքելիս և այլն):

Անասնապահությունում, շնորհիվ նրա առանձնահատկությունների, բրիգադներն անասուններին ամբացնելն անհրաժեշտ է:

Մատնանշված և դրանց նման աշխատանքներին բրիգադներն ամրացնելու ձևը բարձրացնում է պատասխանատվության զգացմունքը, հեշտացնում է նրանց աշխատանքին հսկելը, վերացնում է անդիմությունը՝ աշխատանքի առարկայի վերաբերմամբ (անասնապահությունում — անասունների վերաբերմամբ, դաշտագործությունում, մասնաշխատանք — սեզոնային աշխատանքներում):

Դժբախտաբար, իմոհ: Ագրբեջանում այդ ձևը գործադրում են միայն սակավ կոլխոզները, այն ինչ դա պետք է ամեն տեղ ամենալայն կերպով տարածվի:

Կոլլեկտիվ անտեսություններում ծայր աստիճան անհրաժեշտ պայման է, վոր բրիգադներին ամրացվեն նրանց հարկավոր արտադրության միջոցները — գյուղատնտեսական մեքենաները, լժկանները և այլն՝ նրանց աշխատանքների ամբողջ ընթացքում, այդ միջոցով կարելի է վերջ տալ մեր կոլխոզներին շատերում գոյություն ունեցող անդիմությանը, սովորեցնել մեր կոլխոզիկներին պատասխանատու լինելու կոլխոզային ինվենտարի, կոլխոզային ձիու համար, վորպես իր ձիու համար: Գործարքայությունը մոցնելուց հետո կենդանի և մեռած ինվենտարը բրիգադին ամրացնելն էլ ավելի մեծ նշանակություն է ստանում: Մեքենաները փչացնելու, ձիերը վնասելու դեպքում կարելի է պետք է այնպիսի կարգ սահմանել, յերբ վորոշ թվով աշխատողներ հանվում են անմիջական հանցավորի հաշվից, վորն անփութ է վերաբերվել մեքենային, ձիուն և այլն, այն կոլխոզիկների ոգտին, վորոնք վերադարձել են դրանք լավ գրության մեջ:

Ավելորդ շփոթությունը և հապաղումները վերացնելու նպատակով բրիգադը բաժանվում է խմբակների (ոգակների):

Բրիգադի ներսում աշխատանքի բաժանումը (մասնագիտացում) և արտադրության միջոցների ամրացումը անհրաժեշտ է հասցնել խմբակին յեվ բրիգադի առանձին անդամներին:



Համամիութենական կոլխոզային խորհրդակցութեան վերջնամբ պարտադիր ե կոլխոզնիկներին—բրիգադների անդամներին ամբապընդել հետեյալ աշխատանքներին.—1) դաշտագործութիւնում՝ տրակտորներին, ցանիչներին, խոտ հարող և խուրձ կապող մեքենաներին, կայսիչներին ամրապնդել մեքենավարներին, յուղողներին, թմբակավորներին և զիգողներին. 2) անասնապահութիւնում՝ ձիապաններին, անասնապահներին, կթողներին, չորաններին, խոզ պահողներին, թռչնապահներին և հովիվներին. 3) արհեստանոցներում և ոժանդակ ձեռնարկներում—փականագործներին, դարբիններին, հյուսներին և այլն: 4) մյուս աշխատանքներում՝ պահապաններին, պահեստապետներին, տրանսպորտնիկներին, հաշվառուներին, թամբագործներին և այլն:

Ինքն ըստ ինքեան հասկանալի ե, վոր ամեն մի բրիգադ իր անդամներին դասավորում ե համաձայն աշխատանքի բնույթի:

Այն կոլխոզներում, ուր կազմակերպւած են յեղել կանանց հատուկ բրիգադներ, պրակտիկան ցույց ե տվել նրանց մեծ նպատակահարմարութիւնը: Պետք ե ասել, վոր մեր կոլխոզները կանանց աշխատանքն ոգտագործում են միանգամայն անբավարար չափով: Կանանց մասանները կոլխոզների արտադրական կյանքին քաշկուռ ձևերից մեկը հանդիսանում ե կանանց հատուկ բրիգադներ կազմակերպելը բամբակաբուծութիւնում, շերամապահութիւնում, բանջարբուծութիւնում, կաթնատու անասնապահութիւնում և այլն: Դրա հետ միասին պետք ե ծավալել այն բոլոր միջոցառումները, վոր հեշտոցնում են կանանց աշխատանքի պայմանները (հասարակական սնունդի, մանկամսուրների, մանկապարտեզների և այլն կազմակերպումը):

Կարելի ե կազմակերպել նաե յերիտասարդների հատուկ բրիգադներ, մանավանդ, աշխատանքի այն ճյուղերում, ուր գերակշռում ե դեռահասների աշխատանքը:

Բրիգադին գլուխ ե կանգնած բրիգադիւրը, վորին նշանակում ե կոլխոզի վարչութիւնը:

Լավ բրիգադիւրը բացառիկ նշանակութիւն ունի բրիգադի աշխատանքում: Նա միավարութեան կարգով պատասխանատու ե բրիգադի ամբողջ աշխատանքի համար, զրա քանակական և վորակական կատարման համար: Նրա պարտավորութիւնների մեջ են մտնում՝ նարյադ ստանալ, առաջուց իմաց տալ բրիգադին աշխատանքի տեղի ու ժամանակի մասին, աշխատանքը բաժանել բրիգադի անդամների միջև, ամեն մի աշխատանքի կատարման համար պատասխանատու անձեր նշանակել, հսկել բրիգադի անդամների աշխատանքին և այլն: Բայց բրիգադիւրը պետք ե լինի վոչ միայն լավ կարգադրիչ, այլե արտաբերութիւնը լավ իմացող: Նա պետք ե սովորեցնի կոլխոզնիկներին, թե ինչպեա պիտի ավելի լավ կատարել հանձնարարւած աշխատանքը. նա պետք ե հետևի մեքենաների աշխատանքին և կարողանա կարգի բերել ու կարգավորել զրանց աշխատանքը: Բրիգադիւրը պիտի կազմակերպի լծկանների խնամքը, ջուր, կեր և մթերք հասցնելու գործը. նա պետք ե կոլխոզի վարչութեանը հանձնի կատարած գործը: Բրիգադիւրը հաշիւ ե առնում ամեն մի կոլխոզնիկի կատարած գործի քանակն ու վորակը, գնահատում ե աշխատանքը՝ համաձայն կոլխոզում ընդունւած մշակման նորմաների և գնահատումների:

Բրիգադը չպիտի ունենա իր գրասենյակը, հաշվապահութիւնը և այլն: Բացի նարյադը կատարելու հետ կապւած արտադրական աշխատանքներից և աշխատանքը հաշվեառելուց՝ վոչ մի դեպքում չի կարելի բրիգադիւրին վորեւ ուրիշ աշխատանք տալ:

Բրիգադիւրն իրեն հանձնած այդ պարտականութիւնների համար չի ազատւում բրիգադին հանձնւած աշխատանքից. միայն նրա բանվորական որը կրճաւում ե  $1\frac{1}{2}$ — $1\frac{1}{2}$  ժամով: Ընդհանրապես ասած, դաշտային և այլ աշխատանքներից ազատւածների թիւը պետք ե, վորքան կարելի ե, քիչ լինի: Փոքր կոլխոզներում կարող են ազատվել միայն նախագահն ու հաշվետարը: Այդպիսի փոքր կոլխոզներում դաշտագետը կամ անասնագետը կարող ե դառնալ ավագ բրիգադիւր:

Ո՞վ կարող ե և պետք ե լինի բրիգադիւր:

Բրիգադիւր պետք ե լինի ավելի փորձւած ակտիւ կոլխոզնիկը—հարվածայինը, վորն աշխատանքի ամենաբարձր արտադրողականութեան որինակներ ե ցույց տվել թե ըստ քանակի և թե ըստ վորակի: Սակայն, մեր կոլխոզները բրիգադիւրներ նշանակելիս միշտ չեն, վոր զրան հարկավոր ուշադրութիւն են դարձնում:

Բրիգադները պետք ե հիմնական ողակները դառնան սոցիալիստական մրցութիւն տանելիս և ծավալելիս: Պետք ե լայնորեն ծավալել սոցմրցումը բրիգադների միջև. նույնպես և միևնույն բրիգադի ներսում առանձին կոլխոզնիկների միջև: Մշակման թե քանակի և թե վորակի կողմից լավագույն բրիգադները պետք ե հարվածային հայտարարել՝ նրանց առանձնացնելով ավելի պատասխանատու աշխատանքների համար: Պետք ե պրեմիա տալ այդպիսի բրիգադներին և նրանց բրիգադիւրներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ № 2.

## 7. ԳՈՐԾԱՐԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

«Կոլխոզներում աշխատանքի կազմակերպման ամենահետաձեռնաց ու անպետք ձևը— դա հավասարեցուցիչ որավարձն ե՝ առանց մշակման հաստատուն նորմաների: Որավարձը քայքայում ե աշխատանքային դիսցիպլինան, քողարկում ե կոլխոզներում լողերին, ահագին քանակութեամբ չորագործւած բանվորական ուժ ե պահում կոլխոզներում»:

Այսպես ե գնահատում մեր կուսակցութեան կենտրոնական օրգան «Պրավդա»-ն աշխատանքի կազմակերպման այն ձևը, վորը մինչև վերջին ժամանակներս համարյա գերակշռող ե յեղել Խորհ. Ադրբեջանի կոլխոզներում: Մինչև այժմ ել մեր կոլխոզների մոտ կեսը գեոուս չի ազատվել կոլխոզային աշխատանքի կազմակերպման այդ «ամենահետաձեռնաց ու անպետք ձևից»:

Դրա հիմնական թերութիւնը կայանում ե նրանում, վոր հավասարեցուցիչ որավարձը գործադրելիս կորչում ե աշխատանքի արտադրողականութեան բարձրացման կարեորագույն ազդակներից մեկը՝ կոլխոզնիկի անմիջական շահագրգռւածութիւնը— իր աշխատանքի արդունքներով: Դրա շնորհիվ նրան հանձնած աշխատանքի կատարումը



բացառապէս կախած է լինում նրա գիտակցականութիւնից, բարեխղճութիւնից և այլն: Մշակում է նա, ասենք, բանվորական որվա ընթացքում<sup>1, 2</sup>, 1 կամ 1½ հեկտար, նրա համար միևնույն է, գրվում է միորոյա գնահատութիւնը: Աշխատանքի կազմակերպման այդ սխառեմին անխուսափելիորեն զուգակցում է կոլխոզային կյանքի ամենավատթար, ամենաֆաստակար յերևույթը—յեկամուտների ու բերքի հավասարեցուցիչ բաժանումն ըստ շնչերի կամ ըստ տնտեսութիւնների:

Կոլխոզային պլակտիկայի փորձը ցույց է տվել և ապացուցել, վոր աշխատանքի կազմակերպման լավագույն, ամենաարդյունավետ սխառեմը գործարքայինն է: Այն կոլխոզներում, ուր որով (ժամանակով) աշխատանքը փոխարկվել է գործարքայինի, այնտեղ մենք ունինք կոլխոզային ամբողջ արտադրութեան ընդհանուր բարելավում, աշխատանքային դիսցիպլինայի բարձրացում, սեզոնային աշխատանքների արագ կատարում, աշխատանքի արտադրողականութեան 50—100 և ել ավելի տոկոսով բարձրացում:

Գործարքայինի այդ հաջողութիւնը բացատրվում է նրանով, վոր դրա շնորհիվ խրախուսվում է կոլխոզնիկների անհատական շահագրգռվածութիւնը՝ իրենց դրած աշխատանքի քանակի և վորակի բարձրութեամբ: Գործարքայինի գյուղութիւնը կայանում է նրանում, վոր կոլխոզնիկի աշխատանքը գնահատվում է վոչ թէ ըստ ժամանակի, այլ ըստ կատարած աշխատանքի ու վորակի: Վորքան մեծ լինին աշխատանքի արդյունքները, այնքան ել բարձր կգնահատվի կոլխոզնիկի աշխատանքը: Այսպէս, որինակի համար, ասենք՝ յեթէ դու հերկել ես (կամ ջրել ես, կամ քաղհանել ես և այլն, միևնույն է) այսքան հեկտար, քեզ դրա համար տրվում է՝ համաձայն սահմանված նորմաների՝ մեկ աշխատուր: Յեթէ դու մեկ ու կես անգամ ավելի ես արել, քեզ մեկ ու կես անգամ ել ավելի աշխատուր է տրվում, թեկուզ և այդ աշխատանքը նույնպէս մեկ դրում ես կատարել:

Այդպիսով, գործարքայինն այնպիսի սխառեմ է հանդիսանում, վորն ամենից լավ է զուգակցում առանձին կոլխոզնիկների շահերն ամբողջ կոլխոզի շահերին:

Աշխատանքի կազմակերպման այդպիսի սխառեմն անհնար կդարձնի կոլխոզի յեկամուտը հավասարեցուցիչ կերպով՝ բաժանելն ըստ տնտեսութիւնների կամ ըստ շնչերի: Արտելի յեկամուտները իրա անդամներին բաժանելու միակ ձևը, վորը համապատասխանում է աշխատանքի կազմակերպման գործարքային սխառեմին, հանդիսանում է արտելի անդամների կողմից կոլխոզային արտադրութեան մեջ դրած աշխատանքի քանակի ու վորակի համեմատ բաժանելը: Դա նաև միակ միջոցն է, վոր արագորեն ու ճիշտ կերպով հավասարեցնում է կանանց և տղամարդկանց աշխատանքի գնահատութիւնը:

Հետևաբար, գործարքայինը կոլխոզում արմատացնելը հանդիսանում է այն հիմնական ողակը, վորի միջոցով կարելի է արմատախիլ անել կոլխոզային աշխատանքի թուր բացասական կողմերը՝ կապված հավասարեցուցիչ որավարձի հետ:

Կազմակերպել աշխատանքն անձնական շահագրգռվածութեան հիման վրա, կոլլեկտիվ աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնել ավելի բարձր ետապի և իրականացնել գյուղատնտեսական ար-

տելի հիմնական սկզբունքը—կոլխոզների յեկամուտները բաժանել կոլխոզնիկների աշխատանքային մասնակցութեան հիման վրա:

Ահա թէ ինչու ընկ. Յակովլեվը՝ Սորհուրդների 6-րդ համագումարում արած իր զեկուցման մեջ՝ գործարքին անցնելը անվանում է «բոլոր հարցերի հարցը»:

Կոլխոզնիկների համամիութենական խորհրդակցութիւնը պարտադիր է համարում գործարքային աշխատանքի անցնել հետևյալ մասսայական գործերում՝ հերկ, ցաքան, սկավառակում, կուլտիվացիա, ցանք, կարտոֆել տնկել, բրել, նոսրացում, կրկնահերկ, բուկը լցնել, քաղհան, խոտահարք, հունձ, փխրացում, կալսում, խուրձ կապել, բամբակաքաղ, պտղաքաղ և ծխախոտի քաղ: Սորհրդային Ադրբեջանի պայմաններում այդ ցուցակին պետք է ավելացնել նաև վոտոգում և մի քանի այլ աշխատանքներ:

Գործարքայինը կարող է և պիտի ընդգրկի գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ մասսան, վորոնց համար հնարավոր է մտկման նորմաներ սահմանել:

Գործարքայինի հիմնական տեսակներն են անհատական և խմբայինը: Այն բրիգադներում, ուր կոլխոզնիկների կազմն ամբողջովա՞ծ է, վորոնք արդեն գտված են լուրերից ու ծուլերից, կարելի է մտցնել նաև բրիգադային գործարք:

Անհատական գործարքի հիմունքը ամեն մի աշխատողի կատարած աշխատանքի քանակի ու վորակի հաշվառն է, վորի համաձայն ել գնահատվում է նրա աշխատանքն աշխատուրերով:

Անհատական գործարքայինը գործադրվում է թէ անհատների վերաբերմամբ և թէ խմբակներում ու բրիգադներում այն բոլոր աշխատանքներում, վորտեղ կը բրլի է ամեն մի կոլխոզնիկի աշխատանքն առանձնացնել ու հաշվի առնել: Սմբակային և բրիգադային գործարքը գործադրվում է այն աշխատանքներում, վորտեղ խմբակի կամ բրիգադայի ամեն մի մասնակցի աշխատանքն առանձնացնել դժվար է: (Որինակ՝ ջրելը, քաղհանը, կալսելը, սիլոսացումը, բրիգադայով կատարած ցանքսը և այլն): Կապակցված բրիգադներում՝ խմբակային կամ բրիգադային գործարքի զեպքում՝ ամեն մի կոլխոզնիկի աշխատանքը գնահատվում է առանձին այն կատեգորիայով, վորը համապատասխանում է նրանց կատարած աշխատանքին:

Գործարքային աշխատանքները գնահատելիս հիմք պետք է ընդունել հետևյալ միավորները՝ հերկի, ջրելու, ցաքանելու, ցանքսի, կուլտիվացիայի, տնկելու, նոսրացման, քաղհանի, խոտահարքի և այլն ժամանակ—հեկտարը, բամբակաքաղի, կալսելու և այլն ժամանակ—ցենտները, կիլոգրամը, անասնապահութիւնում—անասունների քանակը կամ տված կաթը կիլոգրամներով հաշված: Այգեգործութիւնում՝ հողի մշակման և պարարտացման աշխատանքների համար գնահատման միավորը կլինի հեկտարը, կես հեկտարը, բերքահաւաքի, տեղավորելու, տեսակավորելու համար—ցենտները, կիլոգրամը, հատը, այգին խնամելու աշխատանքների համար—ծառերի, թփերի քանակը:

Գործարքային աշխատանքները կազմակերպելու մասին մենք վերել տվել ենք անհատական գործարքի որինակներ, այժմ կտանք յերկու որինակ բրիգադային գործարքի մասին՝ մեկը կապակցված բրիգադի մասին, մյուսը—հատուկ:



1-ին որինակ.—Բրիգադան կազմված է 10 վարդից, 4 ցաքանդից, 3 ցանդից և 3 քշողից. պետք է 100 հեկտար ցորենի վար, ցաքան և ցանքս անել: Աշխատանքի ժամկետը 10 որ է: Գնահատելով 1 հեկտար վարը մեկ աշխատոր, 1 հեկտար ցաքանը—2 անգամ—30 հարյուրերորդ աշխատոր, 1 հեկտար ցանքսը—11 շաբաթանոց ցանիչով—30 հարյուրերորդ աշխատոր ցանդի աշխատանքը և 20 հարյուրերորդ աշխատոր քշողինը. դուրս կգա, վոր 100 հեկտարի վարը Սակկայի գութանով կհավասարվի 100 աշխատորի, ցաքանելը յերկարք ցաքանով—2 անգամ—30 աշխատոր և ցանքսը—50 աշխատոր (30+20):

Կոլխոզնիկների հետ կատարած աշխատանքի հաշիվը տեսնվում է հետևյալ կերպով.— յեթե աշխատանքի ժամանակ պրոդուկտ չի յեղել և ամբողջ աշխատանքը կատարել է բրիգադի միենույն կազմը, ամեն մի վարդին տրվում է հավասար քանակությամբ աշխատոր՝  $100 : 10 = 10$  աշխատոր, ամեն մի ցաքանդին՝  $30 : 4 = 7$  և 50 հարյուրերորդական աշխատոր:

Ցանդները կստանան 30 աշխատոր, իսկ յուրաքանչյուրը — 10 աշխատոր, քշողները կստանան ընդամենը 20 աշխատոր, յուրաքանչյուրը 6 և 66 հարյուրերորդյան աշխատոր:

Յեթե կոլխոզնիկների մի մասը գործի չի դուրս գալիս և դրա շնորհիվ բրիգադի կազմը փոխվում է, հաշիվ պետք է անել յեղնելով ամեն մի կոլխոզնիկի կատարած աշխատանքի քանակից: Որինակ, բրիգադի կազմից 7 հոգի հերկել են 10-ական հեկտար, յերկուսը 7-ական հեկտար, մեկին 8 հեկտար և 2-ի—4-ական հեկտար: Յեղնելով մի հեկտար հերկը մեկ աշխատոր գնահատելուց, ամեն մի կոլխոզնիկին հաշվվում է համաձայն իր աշխատանքի՝ 10 աշխատոր, 7 աշխատոր, 8 աշխատոր և 4 աշխատոր:

2-րդ որինակ.— 20 հոգուց կազմված բրիգադը պետք է բաժնակի ձեռքի քաղհան և նոսրացում անի՝ 50 հեկտարի վրա: Աշխատանքի ժամանակը 20 որ է: Մշակման որական նորման է  $1/8$  հեկտար, իսկ գնահատությունը—1,25 աշխատոր: Հետևաբար, ամբողջ աշխատանքին տրվում է 500 աշխատոր:

Յեթե բրիգադի անդամները աշխատանքի ընթացքում պրոդուկտներ չեն ունեցել և ամբողջ աշխատանքը կատարել է միենույն կազմը, ամեն մի քաղհանողին հավասար քանակությամբ աշխատոր կը հասնի, այսինքն  $500 : 20 = 25$  աշխատոր: Իսկ յեթե բրիգադի կազմը փոխվել է, այն ժամանակ պետք է հաշիվ անել յեղնելով ամեն մի կոլխոզնիկի փաստորեն կատարած աշխատանքից: Բայց քանի վոր քաղհանելիս բրիգադի ամեն մի անդամի աշխատանքն առանձին հաշվել, պետք է յեղնել մշակման որական նորմայից ( $1/8$  հեկտար) և պրոդուկտներին հաշվից պակասեցնել աշխատորները. համաձայն նրանց բաց թողած որերի ու ժամերի ու այդ աշխատորները բաժանել բրիգադի աշխատած անդամների միջև կամ տալ նրանց, վորոնք պրոդուկտներին փոխարեն գործել են:

Կոլխոզան գործիչների միջև միեւն ալթմ սխալ կարծիք կա, իբր թե գործարքայինը գյուղական տնտեսության պայմաններում անիրագործելի է, կամ թե չի կարելի գործադրել մի շարք հիմնական աշխատանքների վերաբերմամբ: Այդ մարդիկ մոռանում են, վոր գոր-

ծարքային մեթոդը կարենաներում չի ստեղծված, այլ հենց կոլխոզներում, վոր նա լավագույն կոլխոզնիկների լավագույն փորձն է, վոր այդ կոլխոզների պրակտիկան ավելի քան ցայտուն կերպով հանդես է բերել գործարքայինի առավելությունները՝ գյուղատնտեսական արտագրություն ընդ հիմնական ճյուղերում:

Նման զրույցների մասին խոսելով «Պրավդա»-ն գրում է.— «Գործարքայինի անգործադրելի լինելու մասին յեղած պնդումները վոչ այլ ինչ են, յեթե վոչ ֆագորդներ հակահեղափոխական, ֆասսատվական թեորիաների, վորոնք նպատակ են ունեցել խանգարելու սովխոզային ու կոլխոզային շինարարությունը. պետք է աշխատել լիովին և վերջնականապես արմատախիլ անելու այդ «թեորիաներ», վճռականորեն պայքարել ոպորտունիստական տատանումների, կասկածների և տեմպը կորցնելու դեմ՝ գործարքայինը մտցնելու գործում»:

Մյուս կողմից վոչ պակաս անխաղաղությամբ պետք է պայքարել այն բոլոր դեպքերում, յերբ գործարքայինը մտցրված է միայն ձևականորեն: Այդ բանն արտահայտվում է նրանով, վոր բրիգադի, խմբակի կամ առանձին կոլխոզնիկի աշխատորների թիվը հաշվի է առնվում վոչ թե նրանց կատարած աշխատանքի համեմատ, այլ ըստ այն որերի քանակի, վոր նրանք անց են կացրել դաշտում: Դա վոչ այլ ինչ է, յեթե վոչ գործարքի անվան տակ որավարձով աշխատանք անցկացնել:

Իսկապես գործադրվող գործարքայինը պահանջում է, վոր աշխատորները հաշվեն համաձայն բրիգադի, խմբակի կամ առանձին կոլխոզնիկի կատարած աշխատանքի քանակի ու վորակի:

Ապա կան նաև տեղ-տեղ այնպիսի դեպքեր, յերբ թեկուզ մշակման նորման լրիվ չի կատարվում, այնուամենայնիվ հաշվվում է ամբողջ աշխատոր և հենց դրանով գործարքայինը խախտվում է: Յեղ ընդհանրապես, տեղ-տեղ «խելք» դեկավարները ամենևին չեն հաշնում կոլխոզնիկի աշխատանքը, յեթե նա նորման չի կատարել: Շատ անգամ կոլխոզային որդանների կողմից բացակայում է կոնկրետ, գործնական դեկավարությունը՝ գործարքայինը մտցնելու գործում:

Գործարքայինի այդ բոլոր լուրջ թեթուլությունները և ալ ու «ձախ» աղավաղումները վոչ այլ ինչ են, յեթե վոչ արտահայտություններն այն կատարի ագիտացիայի, վոր տանում է կուլակություն ընդդեմ կոլխոզային աշխատանքը գործարքայինի հիման վրա կառուցելուն:

Կուլակությունն որով աշխատելու պաշտպան է դուրս գալիս, ընդդեմ գործարքային սխտեմի:

Անհրաժեշտ է հարվածել կուլակության ազդեցության յերևույթներին մեր շարքերում և կոլխոզային որդանների գործիչների միջավայրում:

Լիովին գործարքայինի անցնելն ամենալավ պատասխանն է դասակարգային թշնամուն և յենթակուլակներին, վորոնք գոտում են, իբր թե կոլխոզներում միայն լողոններն են գտնվում: Գործարքայինի ժամանակ չկա և չեն կարող գոյություն ունենալ «հասարակական աշխատանքի հաշվին ապրել սիրողներ»:

Գործարքայինը մերկացնում է կուլակային այդ պրովոկացիան: Նա կոլխոզները տնտեսապես-քաղաքականապես ամրապնդելու հետ միասին ապահովում է նաև ամբողջ կոլխոզային շարժման վերելքը և



հենց դրանով դառնում է կուլակների դեմ մղվող կռիվի զենքերից մեկը:

Գործարքային անցնելը հեշտացնում է նոր հիմք է ստեղծում աշխատանքային սոցիալիստական ձևերի—սոցմրցման ու հարվածայնության լայն ծավալման համար, թե բրիգադների և թե առանձին կոլխոզնիկների միջև:

## 8. ՄՇԱԿՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Գործարքային աշխատանքի հիմքն են կազմում մշակման նորմաները: Առանց դրանց չի կարելի կազմել կոլխոզի արտադրական ձիշտ պլանը, չի կարելի ուղիղ արտադրական առաջադրություններ տալ բրիգադին, խմբին, կոլխոզնիկին, հետևաբար և չի կարելի հավասարեցուցիչ որակարձից անցնել գործարքային աշխատանքի: Ուստի աշխատանքների նորմայացման հարցը աշխատանքի կազմակերպության հիմնական հարց է՝ առաջնահերթ կարևորություն ունեցող:

Մշակման նորմաներն, ամենից առաջ, պիտի սահմանել աշխատանքների մեկ միավորի համար (հեկտար, տոնն, կիլոգրամ կամ ցնտներ, մի գլուխ անասուն և այլ), թե վաճառ ընդունված ուժ է հարկավոր տրված աշխատանքի միավոր կատարելու համար: Ապա, թե մի մարդու վաճառ աշխատանք է ընկնում այդ միավորի համար: Նորման վորոշելիս յերբեք հարկավոր չեն միևնույն աշխատանքի համար յերկու նորմա սահմանել, որինակ՝ «1-ից մինչև 2 հեկտար» կամ «25—30 կիլոգրամ» և այլն: Աշխատանքի ամեն մի տրված տեսակի համար նորման պետք է լինի միասնական և հաստատուն:

Մշակման նորման կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքների ծավալը և բոլոր ռեյեկտները՝ գործիքների տեսակներն ու դրությունը, քարշառի կարողությունն ու արագությունը, հողի պայմանները, աշխատողների վարժությունը և նրանց ձիշտ դասավորությունը, տեխնիկական առաջադրությունները (աշխատանքների վորակական ցուցանիշները) և այլն: Այդ բոլոր տվյալները պայմանավորում են մշակման նորմայի մեծությունը:

Բայց այդ, գլխավորապես, տեխնիկական պայմաններից, մշակման նորմաներ սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն առավելությունները, վոր ստեղծում են արտադրության կոլլեկտիվ ձևն ու աշխատանքի սոցիալիստական ձևերը՝ արտադրողականությունը մինչև այժմ չեղած բարձրության հասցնելու տեսակետից՝ համեմատած մենատնտեսության հետ: Ապա, բերքահավաքի հաջող կազմակերպումը, վորն՝ ինչպես մատնանշում է խորհուրդների 6-րդ համագումարի բանաձևը՝ «կոլխոզների աշխատանքում չափազանց կարևոր թերությունն է» հանդիսանում, և տեխնիկական մշակույթների (բամբակ, սոյա, ծխախոտ) ամեն կերպ խրախուսելու խնդիրը պահանջում են մշակման այնպիսի նորմաներ սահմանել, վորոնք ապահովելին այդ գծով ամենից լրիվ և արդյունավետ ոգտագործելու կոլխոզային բանվորական ուժը:

Այդ բոլորը մատնանշում է, վոր չպիտի և չեն կարող լինել մշակման միատեսակ նորմաներ՝ բոլոր ժամանակների և բոլոր ուայոնների համար:

Պայմանների և արտադրություն գործիքների փոփոխվելու, կոլխոզնիկների մասնագիտացման և աշխատանքի կազմակերպչական ձևերի զարգացման հետ միասին պիտի և փոփոխվեն նայել մշակման նորմաները: Մակայն, միշտ և բոլոր կոլխոզների համար պարտադիր է մշակման նորմաները կազմելիս աչքի առաջ ունենալ լավագույն բրիգադի և լավագույն հարվածային-կոլխոզնիկի մշակումը: Համամիտությունական խորհրդակցությունն այդ մասին ասում է. «Մշակման նորմաները սահմանելիս կոլխոզը պարտավոր է հավասարվել լավագույն կոլխոզնիկների ու բրիգադների մշակմանն՝ ըստ քանակի և վորակի, վոր ձեռք է բերված սոցմրցման ու հարվածայնության հետևանքով»:

Մշակման նորմաներ սահմանվում են բոլոր մասսայական աշխատանքների համար. բացառություն են կազմում մի քանի աշխատանքներ, վոր անմիջապես կապված չեն արտադրության հետ և վորոնց արդյունքների քանակը չի կարելի չափել (պահապանի, պահեստապետի, անասնապահի, քարտուղարի, նախագահի և այլոց աշխատանքը):

Ամեն մի կոլխոզ՝ իր անտեսություն փորձի հիման վրա և իր պայմանների համաձայն՝ մշակման նորմաները նախապես մանրամասն քննում և արտադրական խորհրդակցությունում և կոլխոզային լայն մասսաների ժողովներում. այստեղ նա ղեկավարվում է այն նորմաներով, վոր կոլխոզային կազմակերպությունները, վորպես որինակելի, հանձնարարում են տրված ճյուղի կամ տրված ուայոնի համար: Յեթե կարիք լինի, նորմաները ստուգելու նպատակով, կոլխոզը կազմակերպում է փորձական աշխատանքներ և սոցմրցման ու հարվածայնության մեջ իրենց ցույց տված լավագույն կոլխոզնիկների ու բրիգադների մշակման հիման վրա՝ առաջ է քաշում հանդիպակաց նորմաներ<sup>1)</sup>: Բոլոր նորմաները պիտի հաստատվեն կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կողմից:

1931 թվի կամպանիայի քաղհանի-բերքահավաքի աշխատանքների մշակման նորմաները Ագրբամբակիկենտրոնը մշակել և<sup>2)</sup>: Այդ նորմաներն որինակելի են հանդիսանում ամբողջ Անդրկովկասի համար և պետք է քննարկվեն ուայոնական լայն խորհրդակցություններում, ուր պիտի սահմանվեն մշակման որինակելի նորմաներ ամեն մի ուայոնի համար առանձին: Այդ ուայոնական նորմաները պետք է քննարկվեն ամեն մի կոլխոզում:

Խորհ. Ագրբեջանի կոլխոզներում մշակման նորմաների պրակտիկան լայնորեն ծավալվել է միայն վերջին ամիսներս՝ խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներից հետո: Բայց մշակման նորմաների անցած կոլխոզներում, մասնավորապես անասնապահական կոլխոզներում դեռևս վոչ բոլոր տեսակի աշխատանքներն են նորմայացրված: Մյուս կողմից քիչ չեն այնպիսի կոլխոզները, վորոնք մշակման նորմաներ չեն մտցրել կամ մտցրել են միայն ձևականորեն: Այդ կոլխոզներում առ այժմ միայն «թղթային» նորմաներ են կամ «աչքի չափով» են վոր-

1) Այստեղ մենք նախագրողացնում ենք կոլխոզներին, վոր Ագրկոլխոզներում հրատարակած և տեղերում լայնորեն տարածված «Մշակման որինակելի նորմաները» անակ են: Այդ նորմաները չափազանց ցածր են և պարունակում են մի քաղ խոշոր քաղաքական-անտեսական սխալներ:

2) Ագրբամբակիկենտրոնի մշակման նորմաները կցված են վերջում:



րոշում նորմաները: Մեր կոլխոզներում իրոք գործարքայինն անցնելը դանդաղեցվում և դժվարեցվում է:

Առանց նորմաների կոլխոզը չի կարող պլանային տնտեսություն տանել, առանց դրանց չի կարելի աշխատանքների լավագույն սխառմին—գործարքայինն անցնել:

Սակայն մշակման նորմաները կոլխոզի կյանքում իրենց դերը կարող են կատարել միայն այն դեպքում, յեթե նորմաներ սահմանելիս ֆլասակար սայթաքումներ չլինեն, վեր տեղ-տեղ նկատվում է:

Բանը նրանում, վոր յերբեմն գործադրվում են մշակման այնպիսի ցածր նորմաներ, վորոնք կորցնում են իրենց սահմանող և ըստուգող բնույթը՝ կոլխոզիկի աշխատանքի վերաբերմամբ: Տեղ-տեղ, ընդհանրապես, մշակման այնպիսի բարձր նորմաներ են ընդունվում, վոր չեն կարող կատարել նույն իսկ լավ աշխատող փորձված կոլխոզ-նիկները:

Այդ յերկու ծոռումներն ել չտվաղանց ֆլասակար են և գործով ոգնում են դասակարգային թշնամուն, վորն ամեն միջոց գործ է դնում խանգարելու կոլխոզներում հաստատուն նորմաներ մտցնելը:

Շատ ցածր նորմաները պակասեցնում են կոլխոզիկի շահագրք-գովածությունը՝ իր աշխատանքի վերաբերմամբ, իջեցնում են նրա արտադրական լարվածությունը, դրա հետևանքով կոլխոզի մեքենաները, ինվենտարը և բանվորական ուժը բավարար չափով չեն ոգտագործվում. դա առիթ է տալիս աշխատողները շռայլելուն, վորովհետև ցածր նորմաներ նշանակելու դեպքում կոլխոզիկը հեշտությամբ կարող է շահել 4—6 և ավելի աշխատող, դրա հետևանքով ել ամեն մի աշխատողի զնահատությունը կարող է շատ ցածր լինել: Դա կուլակների համար նոր պրովոկացիայի աղբյուր է ստեղծում՝ կոլխոզիների դեմ: Շատ բարձր, անիրագործելի նորմաներն ել կարող են առիթ դառնալ, վոր կոլխոզիկների մեջ տրամադրություն ստեղծվի դեպի հետ—որավարձով աշխատանքին դառնալու:

Ուստի պետք է հարվածել թե մեկ և թե մյուս ծոռումը, վորոնք ոպորտունիստական աղավաղումներ են մշակման նորմաների ճիշտ ըմբռնման հարցում, կուլակային ազդեցության հանդես գալն է, — և պետք է սահմանել բոլոր կոլխոզներում ու գյուղատնտեսական բոլոր ճյուղերում մշակման այնպիսի նորմաներ, վորոնք համապատասխանում են ամեն մի կոլխոզի պայմաններին և լավագույն հարվածայինի ու լավագույն բրիգադի մշակմանը:

## 9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԻՖԱՑՈՒՄԸ

Գյուղատնտեսական արտելի հիմնական կանոնադրությունն ասում է. — կոլխոզիկների միջև բաժանելու համար ստացվող յեկամուտները կոլխոզիկները բաժանում են համապատասխան կոլխոզի տնտեսությունում իրանց դրած աշխատանքի քանակի ու վորակի:

Գործարքայինը, յերբ աշխատանքային գործողությունն արդեն ավարտված է՝ քանակի և վորակի կողմից հաշվառում է կասարված աշխատանքի արդյունքների տարբերությունները:

Բայց աշխատանքների վորոշ տեսակների իրագործումը բանվորական ուժի տարբեր մասում (լարվածություն) և գործիչների վոր միատեսակ նախապատրաստություն (փորձառություն, վորակյալություն) է պահանջում: Դրանք թե քանակության և թե վորակի կողմից՝ տարբեր են:

Այդ պատճառով, աշխատանքի միավորի գործարքային զնահատականը աշխատողներով սահմանելու համար՝ կոլխոզը պետք է բոլոր աշխատանքները կարգերի բաժանի՝ համաձայն նրանց բնույթի: Յեվ իսկապես. գործ ել կա, գործ ել. կա թեթև գործ, կա միջակ գործ, կան և այնպիսի գործեր, վոր շատ ծանր են: Բացի դրանից՝ նրանք կարող են լինել հասարակ, կարող են և բարդ լինել. այսինքն՝ այնպիսի գործ, վոր աշխատողից առանձին, պատրաստություն, հմտություն չի պահանջում, կամ, ընդհանրապես, վորոշ չափով հմտություն և վորակյալություն է պահանջում: Որինակ՝ հոտաղների աշխատանքը չի կարելի հավասարեցնել մաճկալի աշխատանքին, կամ ցաքանդղների աշխատանքը՝ տրակտորիստների աշխատանքին:

Կոլխոզիկների աշխատանքի բնույթի այդպիսի տարբերությունների հետևանքով՝ Համամիութենական կոլխոզային խորհրդակցությունը, ինչպես և կոլխոզների 1-ին ադրբեջանյան համագումարն իրանց վորոշումներում անպայման անհրաժեշտ են գտել կոլխոզներում բոլոր աշխատանքները կարգերի բաժանել:

Աշխատանքները կարգերի բաժանելիս՝ պետք է հետևյալ սկզբունքներով ղեկավարվել:—Աշխատանքներ, վոր հատուկ փորձառություն, առողջության համար վորոշակի արտահայտված վտանգ կամ ֆլասակարություն ներկայացնող ֆիզիքական մեծ լարվածություն չեն պահանջում: Աշխատանքներ, վոր վորոշ հմտություն ու լարվածություն են պահանջում, սակայն առանց առողջության համար վորոշակի արտահայտված վտանգի կամ ֆլասակարության: Աշխատանքներ, վոր փորձառություն ու առողջության համար վորոշակի արտահայտված վտանգ կամ ֆլասակարություն ներկայացնող ֆիզիքական լարվածություն են պահանջում: Աշխատանքներ, վոր առողջության համար նշանավոր չափերով վտանգ կամ ֆլասակարություն ներկայացնող ֆիզիքական մեծ լարվածություն և մեծ հմտություն են պահանջում: Աշխատանքներ վոր միջակից բարձր վորակյալություն կամ առանձին ծանր աշխատանք են պահանջում:

Աշխատանքն ըստ բնույթի, բարդության և իրագործելու համար աշխատողից պահանջվող վորակյալության կամ տեխնիկական հմտության համապատասխան՝ տարիֆային ցանց է սահմանվում, վոր կարող է լինել 4, 5 կամ 7 կարգանոց: Ադրբեջանի կոլխոզների համար հանձնարարվում է 4 կարգանոց տարիֆային ցանց՝ թեթև, միջակ, ծանր և առանձին փորձառություն ու վորակյալություն պահանջող աշխատանքներ:

Համաձայն աշխատանքի կազմակերպմանը վերաբերող Համամիութենական կոլխոզային խորհրդակցության և Ադրբեջանի կոլխոզների 1-ին համագումարի վորոշման այդ աշխատանքներն, որինակի համար, կարելի է բաժանել հետևյալ կերպով.



## Թեթեվ աշխատանքներ

1. Ձի, յեզ ու գոմեշ քշող:
2. Ակոսում աղբ դնելը:
3. Ցաքանելը:
4. Կարտոֆիլ տնկելը:
5. Խոտ չորացնելը և հավաքելը:
6. Խուրձ կապելը:
7. Կալսիչի մոտ աշխատելը (հարդը, ցորենը քաշելը):
8. Հովվի ոգնական:
9. Պահապան և թղթատար:
10. Բակը և շինությունները մաքրելը:

## Միջակ աշխատանքներ ու վորոճ հմտություն պահանջող աշխատանքներ

1. Կուլտիվատորներով աշխատանք:
2. Ցանքա—ձեռքով և մեքենայով:
3. Քաղհան, նոսրացում և թոխել:
4. Հացահատիկի ախտահանում:
5. Ծխախոտարուծություն վերաբերող աշխատանք:
6. Աշխատանքը պարտիզում և խաղողի այգում:
7. Բամբակաքաղ:
8. Կով կթելը:
9. Անասուններ խնամելը:

## Ծանր աշխատանքներ լեվ առանձին հմտություն պահանջող աշխատանքներ

1. Ձիով, յեզով, գոմեշով վար անել:
2. Արտերը ջրելու աշխատանք:
3. Հնձող, հարող և խուրձ կապող մեքենաներով աշխատանք:
4. Ձեռքով հաց և խոտ հավաքելը:
5. Կալսող մեքենային խուրձեր տվողի աշխատանք:
6. Քաղաքամերձ տնտեսություն պայմաններում կովեր խնամելը:
7. Խոշոր յեզվորավոր անասուններ արածացնելը:
8. Ավազ բրիգադիւրներ:
9. Պահեստապան:
10. Մի տարուց պակաս ստաժ ունեցող տրակտորիստ:

## Վորակյալություն պահանջող աշխատանքներ

1. Այգեգործ, բանջարանոցապան:
2. Մեղվաբույժ, շերամաբույժ, թռչնաբույժ:
3. Մի տարուց ավելի ստաժ ունեցող տրակտորիստ:
4. Փակնագործ, դարբին:
5. Հյուան, վորմնադիր, տակառագործ, ջաղացապան:
6. Տնտեսություն կամ տնտեսություն ճյուղի վարիչ:
7. Վարչության նախագահ:
8. Հաշվետար, քարտուղար:

Բացի վերև մատնանշված գլխավորապես տեխնիկական նշաններով աշխատանքը տարիֆային ցանցի այս կամ այն խումբը դասելիս՝ անհրաժեշտ է հաշվետվել նույնպես և տրված արտելի տնտեսությունում, առանձնապես տեխնիկական կուլտուրաների ճյուղերում (բամբակ, սոյա, ծխախոտ) գերակշռող արտադրություն հանդիսացող հիմնական ճյուղերում բանվորական ուժերը խրախուսելու, ամենից առաջ սպտագործելու խնդիրները:

Դրան նայած՝ կուլտուրային որգանքները կարող են այս կամ այն աշխատանքը մի կարգից մյուսը փոխել: Որինակ, յեռնելով բամբակարուծությունը խրախուսելու խնդիրներից, կուլտուրաներին ավելի շահագրգռելու համար, Հակկոլխոզներում 1931 թվի քաղհանի ու բերքահավաքի կամպանիայում՝ բամբակի քաղհանի, փխրեցման և բերքը հավաքելու աշխատանքները միջին կարգից փոխել և ծանր աշխատանքները:

Թե աշխատանքների տարիֆացման և թե նրանում կատարվող ամեն մի փոփոխություն պետք է կուլտուրաների ընդհանուր ժողովում քննություն առարկա հանդիսանա և հաստատվի այդ ժողովի կողմից:

Տարիֆային ցանցով աշխատանքների գնահատումն և սահմանվում: Դրա իմաստն այն է, վոր դժվարություն ու վորակյալությամբ կողմից հավասար աշխատանքների համար հավասար գնահատումներ սահմանվեն: Ավելի ծանր ու բարդ աշխատանքի համար, վորի գնահատումը պետք է ավելի մեծ գնահատում սահմանվի, քան հեշտ ու հասարակ աշխատանքի համար, վորի գնահատումը պետք է պակաս լինի: Տարիֆային ցանցն անկարելի է դարձնում զանազան աշխատանքի համար հավասար գնահատում անելը:

Մինչև վերջին ժամանակներս Ադրբեյջանի կուլտուրների մեծ մասում աշխատանքի վոչ մի տարիֆացում գոյություն չի ունեցել, հենց այժմ էլ կան կուլտուրներ, վորոնք դեռ ևս իրանց աշխատանքները կարգերի չեն բաժանել:

Այդ կուլտուրներում ամեն տեսակի աշխատանքները, — ուղում և հեշտ կամ ծանր լինին, հասարակ կամ վորակյալ, — միատեսակ են գրանահատվել և վորպեսզի կուլտուրաների շարքերում գոյություններ, տարածաշրջաններ չլինեն, հերթով են ուղարկվում հեշտ կամ ծանր աշխատանք կատարելու:

Կուլտուրային շինարարություն պրակտիկան շոշափելի կերպով ցույց է տվել աշխատանքը հավասար գնահատելու սխալ ու ֆլասակար լինելը: Կուլտուրների հետադոման նյութերը հաստատում են, վոր այն կուլտուրներում, վորտեղ գնահատումն աշխատանքի բնույթի և ծանրություն համապատասխան չի յեղել սահմանված՝ այդպիսի կուլտուրներում աշխատանքային դիսցիպլինան կաղում է, աշխատանքի արտադրականությունը ցածր մակարդակի վրա է գտնվում: Փաստեր կան, վոր կուլտուրաները հրաժարվել են ավելի ծանր ու պատասխանատու աշխատանքներ կատարելուց, ինչպես և վորակյալ աշխատողները չեն ցանկացել կուլտուր մտնել:

Բացի դրանից, կուլտուրներում աշխատանքների կարգային գնահատում չլինելով՝ կուլտուրաներից վոչ վոք շահագրգռված չի յեղել իր



վորակյալութիւնը բարձրացնելու, քանի վոր, միևնույն է, ինչ գործ էլ անեն, աշխատանքը հավասար պետք է գնահատուի:

Աշխատանքի հավասարեցուցիչ գնահատման հետամնաց ու փնտաւար սխտեմով պայմանավորված բոլոր այս յերևութիւնները խորհրդում ենին կոլխոզի տնտեսական կայունութիւնը և նրա զարգացումը խանգարում:

Կարգերի համեմատ գնահատում մտցնելուց հետո՝ թե կոլխոզի ներքին կարգն է ամրապնդվել՝ աշխատանքային դիսցիպլինան ամրապնդվելու և թե աշխատանքի արտադրականութիւնը բարձրանալու տեսակետից: Կարգերի համեմատ աշխատանքի գնահատման հետեանքով՝ կոլխոզիկներին շարքերում բնդհանուր ձգտում է ստեղծվել ծանր ու պատասխանատու աշխատանքներ կատարելու, ինչպես և վորակյալութիւն ու մասնագիտացում ձեռք բերելու:

Տարիֆային ցանցը պետք է բոլոր կոլխոզներում անհապաղ դառնա աշխատանքի ուղիղ կազմակերպման բաղկացուցիչ մասը:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ № 3.

#### 10. ԱՇԽԱՏՈՐԵՐՈՎ ԳՆԱՀԱՏՆԵՑԵՔ ԲՈՒՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր աշխատանք կատարելու որվա նորման գնահատվում է աշխատորերով՝ ըստ խմբերի: Աշխատորը—գործադրած աշխատանքը չափելու և նրա ինչպես քանակական, նույնպես և վորակական հաշվետման ձևի պայմանական միավորն է: Աշխատորի մասին ունեցած ամեն մի ուրիշ հասկացողութիւն՝ պարզապէս սխալ է: Համամիութենական կոլխոզային խորհրդակցութեան վերջմամբ՝ կոլխոզիկի որվա կատարած աշխատանքի նորմայի համար՝ աշխատորերով գրնահատուին են սահմանվում հետեյալ չափերով.—

|     |                             |                |        |          |
|-----|-----------------------------|----------------|--------|----------|
| I   | Կարգ (հեշտ աշխատանքի համար) | $\frac{3}{4}$  | (0,75) | աշխատոր. |
| II  | » (միջակ » » )              | 1              | (1,0)  | »        |
| III | » (ծանր » » )               | $1\frac{1}{4}$ | (1,25) | »        |
| IV  | » (վորակյալ » » )           | $1\frac{1}{2}$ | (1,50) | »        |

Մշակման նորմայի հիման վրա կատարված գործարքային աշխատանքը հաշվելու ավելի պարզութեան ու հարմարութեան համար՝ սահմանվում է, թե ինչքան ամբողջ և հարյուրերորդական աշխատոր է հասնում կոլխոզիկի կատարած յուրաքանչյուր գործարքային աշխատանքի համար (1 հեկտարի, 1 ցենտների համար և այլն): Այսինքն բոլորը վերածվում է գործարքային գնահատումների՝ աշխատորերով—գործավարձի:

Պարզաբանելու համար՝ բերենք հետեյալ որինակը:

Յենթադրենք, թե տեղական սիստեմի առուներով ջրելու համար մի մարդու համար որվա կատարելիքի նորմա է սահմանված  $\frac{3}{4}$  (0,75) հեկտար. վորպեսզի իմանանք մի հեկտար ջրելու աշխատանքի գնահատման գործարքային նորման աշխատորերով՝ պետք է նայել, թե այդ աշխատանքը տարիֆային ցանցի վոր կարգում է նշա-

նակված: Ասենք, թե դա նշանակված է 3-րդ կարգում, այսինքն՝ ցերեկվա մշակման համար ( $\frac{3}{4}$  հեկտար) նա ստանում է  $1\frac{1}{2}$  (1 և 25 հարյուրերորդական) աշխատոր: Դա նշանակում է, վոր նա յերեք քառորդ հեկտար ջրելու համար ստանում է 1 և 25 հարյուրերորդական աշխատոր, հետեաբար՝ մի քառորդ հեկտար ջրելու համար կստանա յերեք անգամ պակաս. այսինքն՝ 41 հարյուրերորդական աշխատոր ( $1,25 : 3 = 41$  հարյուրերորդականի): Այդ 41 հարյուրերորդականը գումարելով 1 և 25 հարյուրերորդական աշխատանքին, կտանենք, վոր 1 հեկտար տարածութիւն ջրելու համար՝ կոլխոզիկը կստանա 1 և 66 հարյուրերորդական աշխատորի: Իմանալով, թե կոլխոզիկին ինչքան է ստանում մի հեկտար ջրելու համար (վոռովման գործարքային նահատում), հեշտութեամբ կարելի է գտնել ամեն քանակութեան հեկտարների ջրելու աշխատանքի գնահատումը: Յեթե, յենթադրենք, վոր վոռովված է  $\frac{1}{2}$  հեկտար, ապա այդ աշխատանքի համար ստանում է 0,83 աշխատոր ( $1,66 : 2 = 0,83$ ), կամ կլոր թվով վերցրած՝ 80 հարյուրերորդական աշխատոր: Յերկու հեկտար ջրելու համար՝ նա կստանա 3 և 30 հարյուրերորդական աշխատոր ( $1,66 \times 2 = 3,30$ ) և այլն:

Այստեղից յերևում է, վոր աշխատոր և բանվորական օր—բոլորովին տարբեր բաներ են և դրանք չպետք է շփոթել:

Աշխատորով հաշվելիս՝ մի բանվորական օրում կարելի է աշխատել մեկ, մեկուկես, յերկու և ավելի աշխատոր՝ նայած կատարած աշխատանքի բնույթին, վորակին ու քանակին:

Նույն ձևով կարելի է աշխատորերով գործարքային աշխատանքի գնահատում սահմանել նույնպես և աշխատանքների մյուս տեսակների համար, այսինքն թե կոլխոզիկը քանի աշխատոր է շահում 1 հեկտար վարելու, 1 հեկտար քաղհանելու, մի ցենտներ բամբակ հավաքելու համար և այլն:

Նույնպես կարելի է գործարքային գնահատում սահմանել անասնապահութեան և գյուղական տնտեսութեան մյուս ճյուղերում տարվող աշխատանքների միավորի համար:

Գործարքային աշխատանքն աշխատորերով գնահատումը քննութեան է առնվում կոլխոզիկների բնդհանուր ժողովում և անպայման կախվում աչքի բնկնող տեղերից, Յուրաքանչյուր կոլխոզիկը, յերեք գործի և կանգնում, պետք է իմանա, թե իր կատարած աշխատանքի յուրաքանչյուր միավորի համար քանի աշխատոր է ստանալու:

Ինչպես մատնանշում է կոլխոզիկների համամիութենական կոնֆերանսի վորոշումը, պահանջվող աշխատանքները ժամանակին կատարելու, բերքատութիւնը բարձրացնելու և կոլխոզիկներին սեղոնային յեռուն աշխատանքները (քաղհան, բուլլը տալ, բերքահավաք, բամբակաքաղ, ծխախոտի քաղ և այլն) կատարելում ավելի շահագրգռելու համար, կոլխոզային որդաններին իրավունք է տրվում իրանց հայեցողութեամբ, նայած դաշտերը մշակելու և բերքը հավաքելու պահանջին՝ այդ աշխատանքների համար աշխատորերով ավելացում անել:

Որինակ՝ Զակկոլխոզցիները յենելով բամբակի արտերը ժամանակին ու լիովին մշակելու և մշակման աշխատանքների բարձր վորակըն ապահովելու անհրաժեշտութիւնից՝ աշխատորերով հաշվելու ա-



|                              |   |      |          |
|------------------------------|---|------|----------|
| Այսպես՝ առաջին մշակման համար | — | 1,25 | աշխատոր. |
| յերկրորդ » »                 | — | 1,60 | »        |
| յերրորդ » »                  | — | 1,75 | »        |
| չորրորդ և վերջին » »         | — | 1,90 | »        |

Իացի Զակիլոխոզցեանքի վորոշմամբ ավելացրածից՝ նախատես-  
նվում է և պրեմիա տալը, վոր տրվում է կատարած աշխատանքի վո-  
րակն ստուգելուց հետո, 20 տոկոս յուրաքարչութի բրիգադին, վորպես  
լրացուցիչ հավելում: Իսկ վատ աշխատանքի համար՝ դուրս են գալիս  
համապատասխան թվով աշխատորներ:

Կոլխոզնիկների աշխատանքի գնահատումն ու հաշվետու աշխատ-  
որներով պետք է կատարվի ամբողջ տարվա ընթացքում: Մինչև տար-  
վա վերջը աշխատորները չեն կարող ե հաշվառվել և փողի վերածվել վոչ  
հաշվի գրքերում և վոչ ել վորեն տեղ: Այս կանոնից ամենափոքրիկ  
շեղումը՝ աշխատորների սխառմի կերպումն ազավաղում է առաջ բե-  
րում:

Միմիայն տնտեսական տարվա վերջին, յերբ լիովին պարզվում է  
յեկամտի փաստական գումարն ու կոլխոզնիկների միջև բաժանելիք  
բերքի չափը, միայն այդ ժամանակ հնարավոր է աշխատորները փողի  
կամ բնական միավորի վերածելու, յեթե բերքը բաժանվում է բնա-  
կանով:

Աշխատանքին մասնակցողների միջև բաժանելիք դրամական յե-  
կամուտի կամ բերքի գումարը բաժանելով ամբողջ կոլխոզում յեղած  
աշխատորների վրա՝ կարելի է իմանալ, թե ինչքան փող կամ բերք է  
ընկնում մի աշխատորին: Որինակ, զիցուք թե «26-ի անվան» կոլխո-  
զում՝ բոլոր հանումներն անելուց հետո՝ մնում է 15.000 ռուբլի յեկա-  
մուտ, վոր պետք է բաժանել արտելի անդամներին համաձայն նրանց  
աշխատորների. իսկ աշխատորների ընդհանուր գումարը հավասար է,  
10.000-ի: Այդպիսով յուրաքանչյուր աշխատորի արժեքը կլինի 1 ռ.  
50 կ. (15.000 : 10.000 = 1 ռ. 50 կ.):

Յեթե կոլխոզնիկ Ալի Սաֆար ողլու է նրա ընտանիքի անդամնե-  
րի համար ամբողջ տարում հաշված է 520 աշխատոր, ապա ամեն մի  
աշխատորը հաշվելով 1 ռ. 50 կ., նա կստանա 780 ռ. (520 × 1,50 =  
780):

Իսկ յեթե յեկամտի ընդհանուր գումարը յերկու անգամ պակաս  
լինի, այսինքն—7500 ռ., իսկ աշխատորների ընդհանուր քանակությունը-  
նր մնա նույնը—10.000, ապա մի աշխատորի արժեքը կլինի 75 կոպ.  
և կոլխոզնիկ Ալի Սաֆար ողլին կստանա վոչ թե 780 ռ., այլ յերկու  
անգամ պակաս (75 կ. × 520 = 390 ռ.):

Այս որինակից յերևում է, վոր ինչքան մեծ է կոլխոզի անդամ-  
ների միջև բաժանելիք գումարը և ինչքան քիչ աշխատորների քանա-  
կությունը, նույնքան բարձր է յուրաքանչյուր աշխատորի արժեքը:  
Միմիայն համառ ու հետևողական պայքար մղելով աշխատանքի ար-  
տադրականությունը բարձրացնելու, աշխատորների հետ քմահաճույթո-  
րեն վարվելու դեմ, կարելի կլինի աշխատորների բարձր գնահատումն  
ապահովել փողով կամ բնականով:

Կոլխոզնիկների համամիութենական կոնֆերանսը վորոշել է «վրձ-  
ռականորեն արգելել կոլխոզնիկների աշխատանքի փողով գնահատու-

մը»: Մենք պետք է դրամական գնահատումը՝ հակադրենք աշխատորը,  
վոր կոլխոզնիկի աշխատանքը գնահատելու և հաշվետուելու միակ ու-  
ղիղ չափն է:

Աշխատանքի փողով գնահատումը, վոր 1930 թվին մասսայորեն  
տարածված էր մեր կոլխոզներում, կոլխոզային շարժման պրակտիկա-  
յով մերժված է, վորպես մի ամենաֆիասակար յերևույթ: Վորովհետև  
վոչ մի հնարավորություն չկա մինչև տարվա վերջը ճշտվել հաշվետ-  
ուելու կոլխոզների փաստական յեկամուտն, ուստի և աշխատանքի  
հաստատուն դրամական գնահատումը խիստ բացասական արդյունք է  
տվել: Այդպես, կոլխոզների մի մասը աշխատանքն այնպես է գնահա-  
տել փողով, վոր տարվա վերջին, յեկամուտի դրույթունը պարզելուց  
հետո, դուրս է յեկել չափազանց բարձր ու կոլխոզի հնարավորու-  
թյուններին անհամապատասխան: Այդպիսով այդ կոլխոզները նույն  
իսկ չեն կարողացել «աշխատանքը վճարելու ծախսերը» ծածկել և  
«պարտ են մնացել» իրանց անդամներին:

Ընդհակառակը, կոլխոզների մյուս մասը (մանավանդ բամբակա-  
յին) յեկնելով պլանով յենթադրվող յեկամուտի չափից՝ իր անդամնե-  
րին վորպես ավանս այնպիսի գումարներ է տվել, վոր նրանց բաժնի  
չափից անցել է, վորովհետև տարվա վերջին դուրս է յեկել, վոր յե-  
կամուտի փաստական գումարը նշանավոր չափերով պակաս է առա-  
ջուց յենթադրածից: Դրա հետևանքով կոլխոզնիկները մնացել են  
«պարտ» իրանց կոլխոզներին, իսկ ինքը, կոլխոզն ել պարտ պետա-  
կան ու վարկային-կոոպերատիվային կազմակերպություններին:

Կոլխոզնիկներին վճարելու այս բոլոր անորոշաբանությունները  
կազմալուծում են առաջացրել կոլխոզների աշխատանքում, կոլխոզնիկ-  
ների շարքերում բազմաթիվ թյուրիմացություններ, աշխատանքային  
դիսցիպլինայի անկում և նույն իսկ քայքայել, քանդել են մի քանի  
կոլխոզ: Ապա պետք է մատնանշել, վոր անցյալ տարի աշխատանքի  
դրամական հաստատուն գնահատական սահմանած կոլխոզների մի նը-  
շանավոր թիվ, վորպես կանոն, գյուղատնտեսական արտելի կանոնա-  
դրությամբ նախատեսված հատկացումները չեն արել անբաժանելի ու  
հասարակական ֆոնդերին, վորովհետև միջոցները բոլորը ծախսել են  
իրանց անդամների աշխատանքի վճարումը «կարգավորելու» համար:

Աշխատանքի փողով գնահատումը շարունակ ազավաղել է կոլխոզ-  
ների սոցիալական բնույթը: Կոլխոզնիկներն այդ ընդունել են վորպես  
հաստատուն աշխատավարձ և հաճախ պահանջել անհապաղ վճարել կա-  
տարած աշխատանքի վճարը:

Այս պարզապես ֆիասակար յերևույթները քիչ ֆուս չեն հասցրել  
կոլխոզային շարժմանը, կոլխոզնիկների շարքերում այն տպավորու-  
թյունն ստեղծելով թե կոլխոզը մի ձեռնարկություն է, վոր իր ան-  
դամներին վճարում է ինչպես վարձու բանվորներին:

Դա նշանակում է, վոր անհետանում են այն բոլոր սահմանները,  
վորոնք տարբերում են չքավոր-միջակ տնտեսությունները համայնաց-  
ման սկզբունքներով կոոպերատիվային միացություն դարձրած կոլ-  
խոզները—սովխոզներից, վորպես պետական ձեռնարկություններից:

Այստեղից՝ կոլխոզնիկների հետամնաց մասում տիպիկ սպառողա-  
կան—խնամարկված լինելու ձգտումներ էին ծագում:



Կարծիք եւ արդյոք կոլխոզներում առհասարակ խոսք լինել վորեւ եւ «աշխատավարձի» կամ «աշխատանքի վճարման» մասին: Իհարկե վոչ: Կոլխոզնիկներն իրանց կոլխոզում կոլեկտիվի արտադրութեան մասնակից, արտելի գույքի եւ տնտեսութեան կոլեկտիվ տերն են հանդիսանում, այդ պատճառով նրանք վոչ թե «աշխատավարձ» են ստանում, այլ արտելի ունեցած յեկամուտի վորոշ մասը, վորպես արդյունք իրենց աշխատանքի եւ համապատասխան այդ աշխատանքի: Հետեւաբար՝ հենց «աշխատավարձ» կամ «վճար» տերմինները կոլխոզային իրակա-նութեան մեջ մտցնելը միանգամայն սխալ եւ:

Միմիայն դասակարգային թշնամուն — կուլտիկին եւ հարկավոր աշ-խատանքի հաստատուն դրամական գնահատում մտցնելը կոլխոզ: «Կուլակը վոչ հաստատակամ կոլխոզնիկներին դրուում եւ, վոր կոլխո-զում հաստատուն աշխատավարձ մտցվի, աշխատելով այդ միջոցով կոլխոզը բաժանել կոլխոզնիկներին, կոլխոզային տնտեսութեան շահերը հակադրել կոլխոզային մասսաների շահերին» («Պրավդա»):

Բոլոր այն խոսակցութիւնները եւ «ձախ» ծոռներն մի քանի տեղերում արած փորձերը — պաշտպանելու դրամով աշխատավարձը կոլխոզներում, վոչ այլ ինչ են, յեթե վոչ ուղղակի եւ բացարձակ պաշտ-պանութիւն կուլակային պրակտիկայի եւ վտանահարումն այն բոլոր տարրերութիւնների, վոր կան կոլխոզների ու սովխոզների միջև:

Անհրաժեշտ եւ ամենայն վճռականութեամբ պայքարել այդ «ձախ» աղավաղումների դեմ, վորպես մի փորձ խախտելու կուլակցութեան Կենտրոնական Կոմիտեի եւ Սորհուրդների 6-րդ Համագումարի հրա-հանգը, վոր պահանջում են լիովին ու անհապաղ անցնել աշխատո-րի, վորպես կոլխոզնիկների գործադրած աշխատանքը չափելու եւ գնա-հատելու միակ ձևի:

Մյուս կողմից ել անհրաժեշտ եւ առանց ժամանակ կորցնելու վե-րացնել բոլոր այն պակասութիւններն ու թերութիւնները, վոր նը-կատվում են աշխատանքն աշխատորերով գնահատելու եւ հաշվեառելու գործում:

Դեպքեր են լինում, յերբ մշակման նորմաների համաձայն աշ-խատորեր եւ գործադրային աշխատանքի նորմա հաստատելը թողնում են մինչեւ տարվա վերջը: Դա միանգամայն սխալ եւ, վորովհետեւ այդ դեպքում կոլխոզնիկին հայտնի չի լինի, թե քանի աշխատոր պետք եւ ստանա իր կատարած աշխատանքի համար եւ դրանով ել հնարավորու-թիւն չի ունենա իր յերեկվա աշխատանքն այսորվանի հետ համեմա-տելու: Այդպիսով մինչեւ տարվա վերջը պարզ չի լինի, թե կոլխոզնիկ-ներին ինչքան աշխատոր եւ համար: Հայտնի բան եւ, դա իջեցնում ե կոլխոզնիկի աշխատունակութիւնը եւ գնազան կեղծիքների հնարա-վորութեան դուռ բաց անում:

Մյուս աղավաղումը — տարիֆային ցանցով աշխատորերի գնա-հատման սխալ կոեֆիցիենտն եւ, վորի հետեւանքով 1 (թեթեւ աշխա-տանք) եւ IV խմբի (վորակյալ աշխատանք) միջև 3, 4 անգամից ավե-լի տարրերութիւնն եւ ստացվում:

Համամիութենական կոլխոզային խորհրդակցութեան ընդունած գնահատականով՝ իրար կողքի կանգնած խմբերի (աշխատանքներ) մի-ջև յեղած տարրերութիւնը 0,25 աշխատորից ավելի չպիտի լինի այն-

պես, վոր IV խմբի աշխատանքի գնահատականը 1 խմբի աշխատանքի գնահատումից յերկու անգամից ավելի չպիտի լինի:

Պատահում են այնպիսի կոլխոզներ, վոր վտխանակ աշխատանք-ների խմբերի համաձայն գնահատում սահմանելու, յերբեմն աշխա-տանքի տարրեր գնահատումներ են սահմանում տղամարդկանց, կա-նանց ու դեռահասների համար: Դա գլուղատնտեսական արտելի հիմ-նական սկզբունքը խախտող մի մեծագույն աղավաղում եւ. աշխատան-քի հավասար քանակութեան եւ վորակի համար պետք ե տալ յեկամտի հավասար մասը՝ ով ել վոր կատարած լինի աշխատանքը: Անհրաժեշտ ե վճռական կուլ մղել կոլխոզներում կանանց աշխատանքի իջեցրած գնահատումների դեմ: Աշխատանքի գործադրային գնահատումը աշ-խատորերով՝ տղամարդկանց եւ կանանց աշխատանքի գնահատումն ա-րագորեն հավասարեցնելու լավագույն միջոցն ե:

Աշխատորը կոլխոզնիկների կողմից արտելում դրած աշխատանքը հաշվեառելու եւ գնահատման լավագույն միջոցն ե, ուստի ե կոլխոզի յեկամուտն ու բերքը աշխատանքի քանակութեան ու վորակի հիմուն-քով բաժանելու սկզբունքը մտցնելն ապահովելու լավագույն միջոցը: Աշխատորը — լողերների, պրոգուլչիկների ու յենթակուլակների դեմ ե ուղղված. կոլխոզնիկներին իրանց կատարած աշխատանքի հա-մար համեմելիք աշխատորերի քանակութեանը հաշվեառելով՝ անմիջա-պես յերեւան կհանվի, թե նրանցից ով ե հարվածայնորեն ու բարե-խըղճութեամբ աշխատել, ինչպես վայել ե լավ կոլխոզնիկին, եւ, ընդ-հակառակը, ով ե լողութիւն, պրոգուլ արել, իր յենթակուլակութիւն-նը ցույց տվել ե այլն, նույն իսկ անհրաժեշտ աշխատորերի միմիում-մը չհանելով: Նրանցից անուղղելիները պիտի դուրս վճռվեն կոլխո-զից:

## 11. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ — ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՆԵԼԻՔՆ Ե

Գլուղատնտեսական արտելում աշխատանքի հաշվեառումը միան-գամայն բացառիկ դեր ե խաղում: Ուղիղ ե ժամանակին հաշվեառու-մից ե կախված կոլխոզային յեկամուտները բաժանելու ժամանակ աշ-խատանքային սկզբունքը կյանքի մեջ մտցնելը. նրանից ե կախված կոլխոզնիկի աշխատանքի ինտենսիվութիւնը խրախուսելու գործը:

Բացի այդ կարեւորագույն խնդիրներից, աշխատանքի հաշվեառու-մը լավագույն ու ճիշտ միջոցն ե ստուգելու մշակման նորմաների պլանային առաջադրութիւնները, կոլխոզում գտնված թե ամբողջ բնվորական ուժի ե թե յուրաքանչյուր կոլխոզնիկի ոգտագործման աստիճանը:

Առանց աշխատանքի հաշվեառման չկա ե չի կարող վոչ աշխա-տանքի ուղիղ կազմակերպում, վոչ կոլխոզի յեկամուտների ու բերքի ուղիղ բաժանում լինել: Սա պետք ե յուրաքանչյուր կոլխոզային գոր-ծիչ գիտակցի բացարձակ պարզութեամբ:

Զնայելով աշխատանքի հաշվեառման այդ բացառիկ կարեւոր նշա-նակութեանը, շատ կոլխոզներում այդ գործն անբավարար ե դրված: Տեղերում, ռայոնական կոլխոզ — կոոպերատիվային ու հողային կազ-



մակերպութիւնների գործիչների մեջ այնպիսի հայացք գոյութիւն ունի, իբր թե աշխատանքի հաշվեառումը բացառապէս տեխնիկական հարց է, անարժան իրանց ուշադրութեանը: Չակկոլիտոզցենտորը՝ աշխատանքի հաշվեառման մասին 1931 թվի հունիսի 2-ին կայացրած իր հատուկ վորոշման մեջ՝ այդպիսի վերաբերմունքը բնորոշում է վորպէս «պարզապէս աջ ուղորտունիստական թերազնահատում կոլխոզնիկների ու կոլտնտեսուհիների աշխատանքի՝ աշխատորերով հաշվեառումը դնելու գործում»:

Աշխատատանքի գործադրման հաշվեառումը կոլխոզում տարվում է բրիգադիւրի տված նարյադով: Բրիգադներին տված նարյադում ճշտիվ ցույց է տրվում աշխատանքի քանակութեանն ու վորակը, աշխատանքի միավորի գնահատականն աշխատորերով և բրիգադին տրված ամբողջ աշխատանքի համար հասնող աշխատորերի ընդհանուր քանակութիւնը, գործը կատարելու ժամկետը, աշխատանքը կատարելու համար պահանջվող բանվորական ուշժը, քարշող ուշժը, ինվենտարն ու նյութերը:

Բրիգադիւրը հաշվեառում է վերեւ մատնանշված բոլոր կետերին վերաբերվող նարյադը: Յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի քանակն ու վորակը հաշվեառելու համար՝ բրիգադիւրը բրիգադին մասնակցող կոլխոզնիկների անվանացուցակն է պահում, մատնանշելով յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխատանքի քանակութիւնը: Իսկ այն աշխատանքները, վորոնց յուրաքանչյուր կոլխոզնիկի համար ամենուրեւ հաշվեառումը դժվար է (ջրել, վարել, ցաքանել, ցանքս, քաղհան, կախել և այլն), ապա այդպիսի աշխատանքների ամենուրեւ հաշվեառումը կատարվում է վորոշ տեսակի աշխատանքներ կատարող խմբերով (խմբակային գործաւքային աշխատանք):

Անասնապահական կոլխոզներում աշխատանքը կատարվում է տասնորայ նարյադով: Այդ նարյադներում ցույց է տրվում սպասարկվող անասունների քանակութիւնը, մշակման նորման: Ինչ աշխատանք անհրաժեշտ է կատարել, բանվորական ուշժի և քարշող ուշժի քանակութեանը:

Դաշտագործութիւնում կատարվող հաշվեառման ձևի տեղ՝ անասնապահական գործում սահմանվում է արտադրական պլանի իրագործման հաշվեառում՝ համաձայն անասունների տեսակի, աշխատորերի քանակի, կերերի և այլն:

Վոչ պակաս քան հինգ որը մի անգամ անհրաժեշտ է կանոնավոր կերպով յուրաքանչյուր կոլխոզնիկի ու կոլտնտեսուհու աշխատանքային գրքույկում գրել նրա աշխատորերը: Դա արտելի բոլոր անգամներին ապահովում է ամեն տեսակ թյուրիմացութիւններից ու նրանց շահագրգռում ավելի մեծ յեռանդով աշխատելու: Իսկապէս, կոլխոզնիկը տեսնելով, վոր ինքը մի որում ունեցել է այսքան աշխատոր, մյուս անգամ կաշխատի վոչ միայն դրանից պակաս, այլ ավելի շատ աշխատորեր ունենալու:

Կոլխոզնիկների աշխատանքը կատեգորիաներով աշխատորերի վերածելու բոլոր հաշիվները բրիգադիւրը չպետք է անի, այլ հաշվեառար: Բրիգադիւրը միայն կատարած աշխատանքի քանակութիւնն ու վորակըն է նշանակում:

Ի նկատի ունենալով, վոր մեր կոլխոզներում առ այժմ գրագետ բրիգադիւրների թիւը քիչ է, նրանց ոգնելու համար վորպէս հաշվեառող ու գրող պետք է ոգտագործել հնից իրանց, բրիգադի անգամ գրագիր կոլխոզնիկներին, իսկ յեթե այդպիսիները չկան՝ վերցնել ուրիշ բրիգադաներից:

Ամեն ամսի վերջին կամ յերկու շաբաթ մի անգամ, աշխատանքային գրքույկներում գրածների հիման վրա՝ կոլխոզնիկների ու կոլտնտեսուհիների աշխատորերը վարչութիւնում մտցնվում են նրանց հաշվի մեջ:

Հետագայում պետք է այնպէս անել, վոր աշխատանքային գրքույկները դառնան աշխատանքը հաշվեառելու հիմնական դոկումենտ և աշխատանքն ամեն որ նշանակվի անմիջապէս գործը վերջացնելուց հետո նույն տեղը, վորտեղ աշխատանքներն ընդունվում են: Պետք է վճռականորեն պայքարել այն բանի դեմ, վոր կատարած աշխատանքը գրում են մի քանի շաբաթ, նույն իսկ ամիսներ անցնելուց հետո. պայքարել հսկողութեամբ աշխատանքը գրելու, անվերջ տաւերներ ղեմ և այլն:

Աշխատանքի ուղիղ հաշվեառումը պետք է իրանց՝ կոլխոզնիկների գործը դառնա Դժբախտաբար խորհ. Ագրքեջանի շատ կոլխոզներում աշխատանքի գրքույկներում վոչ միայն չեն նշանակում, այլ և այդ գրքույկներն անգամ չգոյութիւն չունին: Պետք է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի յուրաքանչյուր կոլխոզնիկի անձնական աշխատանքային գրքույկը մտցրվի աշխատորերի այն քանակութեանը, վոր նրան է հասնում՝ համապատասխան իր կատարած աշխատանքի:

Դրա հետ միասին անհրաժեշտ է խիստ պարզացնել տաւերների ու տաւեր—նարյադների ձևերը, դրանց գյուղ ուղարկելով՝ կոլխոզնիկների համար հասկանալի լեզվով: Այդ տեսակետից՝ այս տարվա գարնանը Ագրքեջանի Կոլխոզներում ունեցած ձևերը դեռ շատ թերութիւններ ունին:

Այսօրվա մեծագույն վատտն այն է, վոր կոլխոզային մասսան, վորպէս կանոն, արդեն գիտե, վոր կոլխոզի յեկամուտը պետք է բաժանվի գործադրված աշխատանքի համաձայն: Իսկ ինչ վերաբերում է գործաւքային աշխատանքների հաշվեառման կոնկրետ ձևերին ու այդ աշխատանքների գնահատման մեթոդներին, ապա դա մեր կոլխոզները դեռ վոչ միշտ և վոչ ամեն տեղ են յուրացրել:

Աշխատանքի հաշվեառումը մեր կոլխոզների գծավորութիւններից մեկն է հանդիսանում: Խորհուրդների 6-րդ Համագումարում ընկ. Յակովլեւը միանգամայն ճիշտ է ասել, թե «կոլխոզային աշխատանքում հիմնական թերութիւնը, վորի դեմ պետք է վարել հանենք բոլոր կոլխոզնիկներին, հաշվեառման բացակայութիւնն է, կամ նրա վատ վորակը»:

Այդ մեծ թերութիւնը վերացնելու և աշխատանքի հաշվեառումը պատշաճ բարձրութեան վրա դնելու համար՝ ամենից առաջ հարկավոր է արմատապէս ու վերջնականապէս վոչնչացնել աշխատանքի հաշվեառման վերաբերմամբ գոյութիւն ունեցող այն հայացքը, թե այդ հաշվեառումը գուտ տեսնիկական խնդիր է. անհրաժեշտ է, վոր կոլ-



խողային գործիչները գիտակցեն, վոր աշխատանքի հաշվետուումը քաղաքական-տնտեսական ահազին կարեորութիւն ունեցող հարց է:

Զպիտի մոռանալ, վոր գործարքայի հիման վրա աշխատանքն աշխատորենով հաշվետուելու նոր ձևի խնդիրը կայանում է նրանում, վոր այդ ձևը պետք է յուրաքանչյուր կոլխոզնիկին հնարավորութիւն տա կոլխոզի յեկամտից խնայակա իր բաժինն ստանալու՝ իր դրած աշխատանքի վորակի ու քանակի համաձայն և դրանով էլ ապահովի աշխատանքի արտադրականութիւնը բարձրացնելու և կոլխոզային շարժման հաղթանակը ապահովելու հիմնական գործոնները մեկը:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ ՁԵՆՔ 4

### 12. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒ ՄԵԹՈԴ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշխատանքը կազմակերպելու և կոլլեկտիվ տնտեսութեան արտադրողականութիւնը բարձրացնելու գործում խոշոր գործոն են հանդիսանում աշխատանքի սոցիալիստական նոր ձևերը. — սոցիալիստական մրցութիւն, հարվածայնութիւն, հասարակական բուքսիր և այլն:

Աշխատանքի այդ նոր ձևերն ու մեթոդները ժամանակավոր կամ պահիս չեն: Դրանք պետք է կոլխոզային աշխատանքի կազմակերպման անխզելի յեվ որգանակա մասը կազմեն: Այլեւին, աշխատավորական լայն մասսաների սեփականութեան և աշխատավորական արտադրողական հանգիստացող աշխատանքի սոցիալիստական ձևերից ու մեթոդներից դուրս անկարելի է հենց իրա՝ կոլլեկտիվ աշխատանքի գոյութիւնն ու զարգացումը:

Հետևաբար այդ կողմից առաջին գործը պետք է լինի անխնայաբար մղել այն ռադիկալիստական ու բոլորակրատական հայացքների դեմ, վոր թերագնահատում են և յերբեմն նույն իսկ բոլորովին բանի տեղ չեն դնում սոցմրցութեան, հարվածայնութեան ու հասարակական բուքսիրի նշանակութիւնը կոլխոզային իրականութեան մեջ: Այնտեղ, վորտեղ դրանք գործադրվել են, տվել են շատ մեծ արդյունքներ, վորոնց մասին մեր կոլխոզային պրակտիկայի շատ փաստերն են խոսում: Որինակ՝ անցյալ տարվա բամբակաքաղի կամպանիայի ժամանակ յեղած սոցմրցութիւնն ու հարվածայնութիւնն, կամ այս տարվա ցանքայի սեզոնին յեղած հասարակական բուքսիրները փայլուն որինակներ են տվել, թե հարյուր հազարանոց կոլխոզային մասսաներն ինչպիսի ստեղծագործական արտադրական խանդավառութեան են ընդունակ:

Աշխատանքի սոցիալիստական ձևերի ու մեթոդների խնդիրները նրանում են, վոր կոլխոզային գյուղացիութեան ակտիվութեան, ստեղծագործական նախաձեռնութեան ու խանդավառութեան հիմունքով վեր հանվեն ու կազմակերպեն կոլխոզային լայն մասսաները՝ պայքարելու արտադրական պլանն իրագործելու համար, ընդարձակելու ցանքային տարածութիւնը, բարձրացնելու բերքատվութիւնը վորակով ու քանակով, ավելացնելու կոլխոզային արտադրանքի ապրանքայնութիւնը:

աշխատանքների որացուցային պլանով ժամանակին կատարելու բոլոր գործերը և այլն:

Կոլխոզներում սոցիալիստական մրցութիւն կարելի է կազմակերպել այնպես, վոր կոլխոզը կոլխոզի հետ մրցե, կոլխոզը՝ սովխոզի, կոլխոզը՝ գործարանի կամ ֆարրիկի և վերջապես հենց իրանց, կոլխոզների ներսում, բրիգադը՝ բրիգադի հետ ու առանձին անդամներն իրար հետ:

Այն հարցը, թե ում հետ և աշխատանքի ինչ ասպարիզում մրցել, կոլխոզային հասարակայնութեան գործն է: Կոլխոզը կարող է մրցութեան կանչել այդ կազմակերպութիւններից մեկի կամ մրցել մի քանիսի հետ՝ կոլխոզային արտադրութեան աշխատանքի զանազան ճյուղերում: Որինակ՝ կոլխոզը հարևան կոլխոզին մրցութեան կանչելով թե ցանքան ու ավելի լավ կընդարձակի, կնախապատրաստի ու կանի, միաժամանակ կարող է և սոցմրցութեան պայմանագիր կնքել սովխոզի հետ, իր վրա լրացուցիչ պարտականութիւն վերցնելով, որինակ՝ կոլխոզնիկներ ջոկել սովխոզներում աշխատելու և դրա փոխարեն սովխոզին պարտավորեցնել, վոր նա ոգնի մեքենաներով, լավ տեսակի սերմերով, ազրո-տեխնիկական ոգնութեամբ և այլն:

Սոցմրցութիւնը կոլխոզնիկների և արդյունաբերական ձեռնարկութեան միջև՝ արտադրական կապի նոր լավագույն, ձևերից մեկն է, վոր գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում պրոլետարիատի ղեկավարութիւնն ու մասնակցութիւնը և կոլխոզնիկների ու բանվորների փոխադարձ կապն է ամրապնդում: Գործարանի արդիւնյալների և արտադրական պլանի իրագործումը, կոլխոզային իսկենտարի նորոգումը կազմակերպելու միջոցով գործարանների տեխնիկական ոգնութիւնը կոլխոզներին՝ արհեստանոցներ, կուլտուր-քաղաքական ոգնութիւն և այլն, — բոլոր այն հարցերը կարող են կոլխոզների ու արդյունաբերական ձեռնարկութիւնների միջև սոցմրցութեան պայմանագիր կնքելու առարկա լինել:

Սոցմրցութեան բոլոր դեպքերում անհրաժեշտ է, վոր կոլխոզը նախորդ ծանոթանա այն կազմակերպութեան գործերին, վորին սոցմրցութեան է կանչում և միայն յերկու կողմերի ունեցած համապատասխան պայմաններով վորոշել այն հարցերը, վոր կարելի է գնել պայմանագրում: Մրցութիւնը դատարկ բոլորակրատական խոսք չը դարձնելու համար՝ անհրաժեշտ է, վոր այդ պայմաններն իրագործելի, պարզ ու հասկանալի լինին բոլորի համար: Սոցմրցութեան պայմանագրերով պետք է կնքել կոլխոզնիկների լայն մասսայական ժողովներում ուշադրութեամբ ու մանրամասնորեն քննելուց հետո: Այն պայմանագրերը, վոր կկնքվեն առանց մասսաների մասնակցութեան՝ կմնան վորպես դատարկ ու անբովանդակ դոկումենտներ:

Սոցմրցութիւնը հաջող կատարելու գործում ահազին նշանակութիւն ունի սխտեմատիկ ստուգումն ու թե կոլխոզի ներսում և թե պայմանագրվողների միջև նրա գործադրման հետևանքով ունեցած նըվաճումների հաշվետուումը:

Մտքւոյան ամբողջ ընթացքի պէտք է ամենամանրամասն ու յուրաքանչյուր կոլխոզնիկի համար հասկանալի կերպով լուսաբանվի կոլխոզա-



յին մասսաների ժողովներում, պատի ու տպագրական թերթերում, տարածակներով ու պրակատներով և այլն:

Կոլխոզներին, ինչպես և սովխոզների միջև յեղած սոցմրցությունը վոչ միայն չի բացատում, այլ, ընդհակառակը, սոցիալիստական մրցության ամենալայն կիրառումն է յենթադրում կոլխոզների ներսում, բրիգադների ու առանձին կոլխոզնիկների միջև: Միմիայն այն կոլխոզը կարող է սոցմրցության մասնել ուրիշների հետ, վորն արդեն իր իսկ կոլխոզնիկների լայն մասսաներում սոցմրցություն է ծավալել և միայն այդ հիմունքով նա կարող է հաղթություն տանել մյուս կոլխոզների ու ձեռնարկությունների հետ կնքած պայմանագիրն իրացնելու գործում:

Արտադրողների, խմբակների ու անգամների միջև սոցմրցությունը պետք է ներկայացվի աշխատանքի հիմնական մեթոդն ու մեթոդը: Դա պետք է կոլխոզնիկների ամբողջ մասսան ընդգրկի:

Մրցությունը կոլխոզի ներսում նույնպես տարվում է բրիգադների, խմբակների կամ առանձին կոլխոզնիկների միջև կնքված պայմանագրերի հիմունքով: Մրցության առարկա կարող է լինել, — աշխատանքի արտադրականությունը բարձրացնելը, աշխատանքը ժամանակին կատարելը և այլն: Առանձնապես պետք է մրցության կենտրոն հանդիսանան կոլխոզից ուժերի ու միջոցների լարումը պահանջող աշխատանքները:

Սոցմրցությունը մասսաների ստեղծագործական յեռանդն ու ակտիվությունն ոգտագործելու այնպիսի ձևեր է կյանքի կանչել, ինչպես հարվածայնությունը, հասարակական բուքսիրը և այլն:

Հարվածային տեմպերով աշխատող, անպայման ու ճիշտ ժամանակին իրանց հանձնած գործը ժամանակին կատարելու պարտականությունը վերցնող, հետաձնացների համար հասարակական բուքսիր կազմակերպող բրիգադները կոլխոզի ամենաառաջավոր մասն են կազմում: Մնացած մասսայի համար սոցիալիստական աշխատանքի ու գործնականում մասսաների հեղափոխական ինքնաքննադատության որինակներ են ցույց տալիս:

Կատարվող աշխատանքների վորակը բարձրացնելու համար՝ անհրաժեշտ է բրիգադներ կազմել աշխատանքի վորակի համաձայն: Անհրաժեշտ է այնպես անել, վոր առաջին հերթին հարվածայինն ու սոցմրցողը ապրանք է ուրիշ արտոնություններ ստանա, իսկ նրանցից լավագույնները պրեմիա ստանան՝ պրեմիաների հատուկ ֆոնդից:

Մյուս կոլխոզների հետ մրցության ասպարիզում աչքի ընկած և իրանց արտադրական պլանը վորակի ու քանակի կողմից կատարած կոլխոզները ստանում են վորպես պրեմիա՝ վարկի նախապատվություն, մեքենա, ավտոտրանսպորտ և բաց թողնվում և այլն:

Կոլխոզնիկներին իսկապես մասսայորեն սոցմրցության ու հարվածայնության քաշելը կոլխոզների տնտեսական-քաղաքական առաջնակարգ կարևոր խնդիրն է հանդիսանում, վորն իրոք ապահովում է նրանց արտադրական պլանի կատարումն ու գերակատարումը: Գործարքայինը մտցնելը հող ու պայմաններ է ստեղծում մեծ չափով աշխատանքի սոցիալիստական ձևերը զարգացնելու:

Բավական չեն հարվածայինների առանձին բրիգադները, մրցողների առաջին ջոկատները, այլ կոլխոզը պետք է ամբողջությամբ հարվածային դառնա, կոլխոզնիկների ամբողջ մասսայով սոցիալիստական մրցության մտնի:

Սոցմրցության ու հարվածայնության ամբողջ աշխատանքը տարվում է դասակարգային վորոշակի գծի նշանի տակ: Հարվածային բրիգադների ու մրցողների մասսայի գլուխ պետք է կանգնեն կոլխոզնիկ-կոմունիստները, կոմսովիտները, բատրակներին, չքավորների ու լավագույն միջակների համախմբված շարքերը: Նրանք պետք է աշխատանքի սոցիալիստական նոր ձևերի ու մեթոդների նախաձեռնողներ լինին: Սոցմրցության ու հարվածայնության շտաբ է հանդիսանում կոլխոզի արտադրական խորհրդակցությունը:

Արտադրական խորհրդակցություններ կազմակերպելը պարտադիր է բոլոր կոլխոզներում: Բացի կոլխոզային ընդհանուր արտադրական խորհրդակցությունից, կարելի է ունենալ և բրիգադային ու ճյուղային արտադրական խորհրդակցություն: Յուրաքանչյուր կոլխոզնիկ ու կոլտնտեսուհի պետք է մասնակցի նրանց աշխատանքին: Նպատակահարմար է կանանց հատուկ արտադրական խորհրդակցություններ կազմել:

Կոլխոզային ընդհանուր արտադրական խորհրդակցությունն իր կազմից վարչություն է ջոկում: Համամիութենական կոլխոզային խորհրդակցության վորոշմամբ, արտադրական խորհրդակցությունները պարտադիր կերպով պետք է քննեն:

ա) կոլխոզի արտադրական-ֆինանսական պլանները.

բ) թե ամբողջ կոլխոզի և թե ճյուղային ու բրիգադային սեղոնային գործերի աշխատանքային ծրագրերը.

գ) մշակման նորմաները.

դ) գործարքային գնահատումները.

ե) սոցմրցության ու հարվածայնության պայմանագրերը.

զ) աշխատանքի վորակը.

յե) պատվերները կատարելու ընթացքը.

ը) աշխատանքային դիսցիպլինան.

թ) աշխատանքի հաշվետու.

ժ) լոգրների ու աշխատանքային դիսցիպլինան խանգարողների մասին:

Արտադրական խորհրդակցությունների վորոշումները պետք է հաստատվին կոլխոզի վարչության կողմից:

Մեր կոլխոզներում շատ քիչ են արմատավորած աշխատանքի սոցիալիստական ձևերն ու մեթոդները և արտադրական խորհրդակցությունների կազմակերպումը: Շատ դեպքերում, շնորհիվ ձևական բյուրոկրատական մոտեցումի՝ այդ խորհրդակցությունները միայն թղթի վրա գոյություն ունին: Մեր կոլխոզային կազմակերպությունները դեռ լավականաչափ գլուխ չեն անցել այդ աշխատանքի: Ամենակարճ ժամանակամիջոցում պետք է լիվիդացիայի լենինական կոլխոզային շինարարության այդ պատասխանատու ֆրոնտում յեղած ճեղքվածքը: Անհրաժեշտ է վերջ տալ այն խզմանը, վոր ստեղծվել է կոլխոզային



մասսաների աշխատանքային խանդավառության ու ակտիվության և կազմակերպչական արտաքին ձևակերպման ու ղեկավարության միջև: Դա լավագույնս պատասխանը կլինի դասակարգային թշնամունք — կուլակուլությանը, վոր խանդարել ու խանգարում և կոլխոզային գյուղացիության առօրյա աշխատանքային կենցաղում աշխատանքի սոցիալիստական նոր միջոցներ ու ձևեր արմատավորելուն, — ջախջախիչ հարված կլինի բոլոր նրանց, ովքեր չեն հավատում կոլխոզային աշխատավոր մասսաների ուժին ու աշխատանքային վերելքի հնարավորությանը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ № 5

13. ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿԱՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ, ՎՈՐՊԵՍ ԿԱԶՄԱ-ԿԵՐՊԻՉ ԿՈՒԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

Մեքենա-տրակտորային կայանը — գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմնական լծակն է, լավագույնս կազմակերպչական ձևը, վոր ի՞նչ միացրել և գյուղի ինչպես տեխնիկական, նույնպես սոցիալիստական վերակառուցման խնդիրները: Այդ պատճառով չկա ավելի վնասակար հայացք քան այն, վոր մեքենա-տրակտորային կայանը ներկայացնում է վորպես մի կազմակերպություն, վոր կոլխոզային շարժումից, կոլխոզի ներքին կյանքից դուրս է կանգնած, ինչպես վարձատու կետի պես մի բան:

Մեքենա-տրակտորային կայանն է և պետք է լինի մի կազմակերպություն, վոր ներկուլտոզային շինարարության կենտրոնում է կանգնած, անխցելի կերպով կապված է այդ շինարարության հիմնական խնդիրների հետ, իսկական կազմակերպիչն ու կառուցողն է խոշոր կոլեկտիվ տնտեսության, կոլխոզային շարժման վերելքի, համատարած կոլեկտիվացման ու կուլակուլության վորպես դասակարգի վոչնչացման հզոր գործոնն է:

«Մեքենա-տրակտորային կայանն, — ասում է ընկ. Ֆակովկեր, — վարձատու կետ չէ, ինչպես գուցե մեկն ու մեկը կարծում է. — դա կազմակերպիչ է տնտեսության, կազմակերպիչ կոլխոզների աշխատանքի, կազմակերպիչ յեկամուտների բաժանման, կոլխոզային արտադրանքը հալաքելու ու պետությանը հանձնելու (ծախելու) գործի» (Պորհուրդների համագումարին արտասանած ճառից):

Պորհուրդային Միության Հոգեփողկոմատի ու Կոլխոզցիների 1931 թվի ապրիլի 20-ի վորոշումը՝ կոլխոզների աշխատանքը կազմակերպելու ու կոլխոզները գործարքային փոխանցելու խնդիրը մեքենա-տրակտորային կայանների համար այնպիսի պարտականություն է համարվում, ինչպեսին հենց տրակտորային աշխատանքների կազմակերպումն է:

Դա նշանակում է, վոր կոլխոզների տնտեսությունն կազմակերպելու բոլոր հիմնական խնդիրներն, ինչպես պլան կազմելը, բրիգադներ կազմակերպելը, գործարքային աշխատանք մտցնելը, մշակման նորմաներ մշակելը, աշխատանքի տարիֆացումն ու գնահատումը, աշխատանքի հաշվետու, յեկամուտի բաժանելն ու կոլխոզների արտադրանքի ապրանքային մասը պետությանը հանձնելը, — այս բոլորը պետք է

կազմակերպվի մեքենա-տրակտորային կայանների ոգնությամբ ու անմիջական պատասխանավորությամբ:

Սակայն Ագրբեշանի մեքենա-տրակտորային կայանների այդ դժով տարվող աշխատանքը կամ շատ թույլ է, կամ բոլորովին չկա: Մեքենա-տրակտորային կայաններին մեծ մասն՝ ինչպես այդ քանիցս նշվել է կուլակցական ու կոլխոզային բարձրագույն կազմակերպությունների կողմից, մինչև այժմ շարունակում են հեռու մնալ կոլխոզների ներքին կյանքին անմիջական կերպով մասնակցելուց, աշխատանքը կազմակերպելուց: Անհրաժեշտ է անհապաղ ու արմատապես վերջ տալ այդ դրությունը:

Մեքենա-տրակտորային կայանները պետք է առանց ժամանակ կորցնելու, թեև վեր քաշած՝ անցնեն աշխատանքը կազմակերպելու ու ամենից առաջ՝ կոլխոզներում գործարքային ու աշխատանքի հաշվետու կազմակերպելու գործին, դրա համար հավաքելով իրենց ամբողջ ուժերն ու միջոցները:

Մեքենա-տրակտորային կայանները պետք է գործով ջախջախեն բոլոր այն ոպորտունիստական դրույթները, վոր մեքենա-տրակտորային կայանները բաժանում են կոլխոզներից ու նրանց վարձատու կետեր դարձնում:

Միմիայն մեքենա-տրակտորային կայանների ոգնությամբ կոլխոզները կկարողանան կոլեկտիվի տնտեսության ու աշխատանք կազմակերպելու գործն ուղիղ դնել իրանցում ու մեքենա-տրակտորային կայանները միայն կոլխոզներում աշխատելով կարող են իրականացնել այն մեծ խնդիրները, վոր նրանց առաջ է դնում գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ № 6

ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԲԵՐՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱԶԱՅՆ (ԱՇԽԱՏՈՐԵՐՈՎ)

Բերքն ու յեկամուտը բաժանելը կոլխոզի աշխատանքում ամենահիմնական ու ամենապատասխանատու մոմենտն է: Նա ամենապարտադիր կերպով կապված է աշխատանքի կազմակերպման ամբողջ սխեմայի հետ ու ինքն ել հանդիսանում է կոլեկտիվ տնտեսության հիմնական սկզբբունքները մտցնելու գործում կարևորագույն գործոն: Հենց յեկամուտը բաժանելու մեջ է իրացումը բոլոր այն առավելությունների, վոր ստանում է նախկին չբավոր-միջակ անհատականը՝ տնտեսարարության կոլեկտիվ ձևից: Ապա նրանից են կախված կոլխոզային նպատակային կուլակման տեմպերն ու չափերը և գյուղում կոլխոզային համայնեցրած սեկտորի հետագա աճումն և իրագործումը բոլոր այն պարտականությունների, վոր կոլխոզների առաջ է դնում մեր յերկրի սոցիալիստական շինարարությունը: Ուստի նրա ուղիղ լուծումը բացառիկ կարևոր նշանակություն ունի:

Կոլխոզի ընդհանուր յեկամուտները ստացվում են՝ դաշտագործությունից, բանջարաբուծությունից, այգեգործությունից, անասնապահությունից, ոժանդակ ձեռնարկություններից — յեթի կան կոլխոզում



—կոլխոզային տրանսպորտն ոգտագործելուց, դուրսն աշխատանքի գնացողներին աշխատավարձից արվող հատկացումներից և այլն:  
Կոլխոզի յեկամուտներին բաշխումը կարելի է բաժանել հետևյալ խմբերի. ա) տնտեսական—վարչական ծախսեր, բ) պետական վճարումներ, գ) ներքին հատկացումներ, կուտակում և ֆոնդեր, դ) յեկամուտի ու բերքի մի մասը, վոր պետք է բաժանվի արտելի անդամների միջև:

Առաջին խմբի մեջ են հետևյալ հոգվածները. — տնտեսական ծախսի (ընթացիկ նորոգում, տնտեսական մասն արտելաների գնումներ, բանեցրած սերմի ու կերի արժեքը, վառելիքի ծախսը, վարչական ծախսեր (2%-ից վոչ ավելի), անասունների, գյուղատնտեսական շենքերի ապահովագրում, ստացած վարկի տոկոսների վճարում, մեքենա-տրակտորային կաշանների վճարումներ, հատկացումներ ապահովագրական, սերմի ու կերի ֆոնդերին և այլն:

Ծախսերի յերկրորդ խմբի մեջ են մտնում.—գյուղատնտեսական տուրքի վճարումը: Մենք չենք խոսում պետական մթերութների ժամանակ (բամբակ, հաց, բուրդ, միս և այլն) գյուղատնտեսական արտադրանքը հանձնելու մասին, վորովհետև դա վաճառք է, վոր կոլխոզի յեկամուտի դրամական ու արդյունաբերական—ապրանքային մասն է կազմում: Մթերութների ժամանակ արտադրանքը հանձնելը կոլխոզների պարտականութիւնն է. հանձնման չափերը վորոշվում է Առևտրի Ժողովրդատի ու Կոլխոզներու վորոշման համապատասխան: Կոլխոզն այդ հանձնումը կատարում է գերակատարում է, «վոչ մի գրվանքա կոլխոզային արտադրանք չպետք է սպեկուլյանտի ձեռքն ընկնի» լուրճնքն ունենալով:

Ծախսերի յերկրորդ խմբի մեջ են մտնում—անբաժանելի ու հասարակական ֆոնդերին տրվելիք վճարումները: Գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության համաձայն՝ անբաժանելի ֆոնդերի վճարումներն արվում են 10-ից 30%, իսկ հասարակական ֆոնդերին՝ 5-ից 15%: Մոտերքս կազմակերպված ու դեռ ևս վոչ բավականաչափ ամբապնդված կոլխոզների վերաբերմամբ, վոր Ադրբեջանի կոլխոզների հիմնական մասն են կազմում, ավելի լավ է կանոնադրության մեջ նախատեսված նվազագույն չափերն ընդունել, այսինքն՝ անբաժանելի ֆոնդի տալ 10% և հասարակական ֆոնդին—5%\*): Այդ ֆոնդերի վճարումներն արվում են կոլխոզի ստացած յեկամուտից, դուրս գալով կոլխոզի ցանքսային տարածութիւնը ցանելը պլանով լիովին ապահովող սերմի ֆոնդը, համայնեցրած անասունների կերի և գյուղատնտեսական տուրքն ու կոլխոզի գույքն ապահովագրելու համար պահանջվող ծախսերը: Միայն դրանից հետո ծածկվում են տնտեսական ծախսերը:

Անբաժանելի ֆոնդն ոգտագործվում է կոլխոզի հիմնական ներդրումներին համար. որինակ՝ գյուղատնտեսական մեքենաներ, լծկաններ, ագնավացիկ անասուններ գնելու, տնտեսական շենքեր հիմնելու համար և այլն, ինչպես և արտադրական վարկերի պարտքը վճարելու համար:

\*) Տես Սորերդային Միության Հոգովորդատի 1930 թվի մայիսի 31-ի կարգադրութիւնը:

Հասարակական ֆոնդը բաժանվում է կուլտուր-կենցաղային, արեմիս տալու և այլ ֆոնդերի, ինչպես և արտելի աշխատանքի անընդունակ անդամներին նյութական ոգնութիւն հասցնելու ֆոնդի:

Չորրորդ խումբն է կազմում յեկամուտի ու բերքի այն մասը, վոր պետք է բաժանվի արտելի անդամների միջև: Այստեղ է մտնում դաշտագործության ու համայնացրած կաթնային անասնապահության բնդհանուր յեկամուտից հանած 5%-ը. դա կոլխոզիկների միջև բաժանվում է համաձայն իրանց կոլխոզ մտցրած գույքի արժեքի: Հինգ տոկոս վրձարումները բաժանելը զլխավորապես միջակներին խրախուսելու համար է, վորպեսզի ուժեղացվի միջակ տնտեսութիւնների համայնեցումը:

Յերր արդեն կոլխոզի տնտեսական կարիքների համար բոլոր այդ հատկացումներն արված են, մնացած ամբողջ յեկամուտը, վոր թե մթերք՝ մնում է կոլխոզիկներին բաժանելու:

Ի՞նչ սկզբունքով է կատարվում բաժանումը: Սա մի շատ մեծ տնտեսական-քաղաքական կարևորութիւն ունեցող հարց է: Այդ հարցի պատասխանից է կախված թե կոլխոզի ներկա դրութիւնը և թե նրա ապա դարգացումը: Առանց այդ հարցի ձիշտ լուծման՝ սոցիալիստական արտադրության ախլի խոշոր կոլեկտիվ տնտեսութիւն չես կառուցի: Անցյալ տարիների կոլխոզային պրակտիկան դանազան տեղերում դանազան տեսակ է լուծել այդ հարցը: Կոլխոզի յեկամուտն ու բերքն արտելի անդամների միջև բաժանելու ամենատարածված ձևերից մեկը՝ շնչի կամ տնտեսության վրա սպառողական—հավասարեցուցիչ բաժանումն է:

Այս թե ընկ. Յակովլեն այդ տեսակ բաժանման մասին ինչ է ասում Սորերդային 6-րդ համագումարում իր արտասանած ճառում. —«1930 թվի աշխատանքում ամենապատասխար թերութիւնն այն է յեղել, վոր շատ զեպքում կոլխոզային յեկամուտը բաժանել են վոչ թե կոլխոզիկի աշխատանքի քանակին ու վորակին նայած, այլ շնչի վրա»:

Կոլխոզային յեկամուտների ու բերքի հավասարեցուցիչ բաժանումը Սորերդային իշխանության սկզբունքը չէ և վոչ էլ գյուղատնտեսական արտելի, այլ ըստ եյության դասակարգային թշնամու—կուլակության:

«Յեկամուտը (թե դրամական և թե մթերքներով) վոչ թե կոլխոզիկի դրած աշխատանքի քանակի ու վորակի համեմատ, այլ շնչի վրա բաժանելը, —ասվում է Սորերդային 6-րդ համագումարի վորոշման մեջ՝ —հաճախ կուլակներն ու կոլխոզների մյուս թշնամիներն են քարողում, վորոնք աշխատում են կոլխոզային գործը քանդել: Ուրիշի աշխատանքի հաշվին ապրել սիբոզներին անհրաժեշտ է ամենավճռական հակահարվածը տալ, նույն իսկ կոլխոզից հեռացնել»:

Սպառողական—հավասարեցուցիչ սկզբունքը «խախտում է կոլխոզիկի՝ զեպի կոլխոզային արտադրության արդյունքներն ունեցած շահագրգռվածութիւնը, սուր կերպով իջեցնում աշխատանքի արտադրականութիւնը, պակասեցնում կոլխոզիկների աշխատանքի դուրս գալը և դրանց հետևանքով՝ պակասեցնում կոլխոզի յեկամուտը» (Յակովլեն):



Հիրավի, յեկամուտը շնչի կամ ծխի (կամ վորն և վոչ աշխատանքային ուրիշ նշանով—ըստ փայերի, ըստ հողի և այլն) վրա բաժանելով՝ կոլխոզնիկներինց ով կցանկանա ավելի շատ ու լավ աշխատել, յեթե տնտեսական տարվա վերջում կոլխոզային յեկամուտից իր բաժինը պետք և նույնքան լինի, վորքան այն կոլխոզնիկներինը, վոր քիչ ևն աշխատել ու վատ:

«Այն կոլխոզներում» (վորտեղ յեկամուտն ըստ շնչի (կամ ըստ ծխի Գ. Ա.) և բաժանվում), կոլխոզնիկներինց լավագույններն ու ավելի զիտակիցները, ավելի նվիրվածներն ընդհանուր գործին՝ աշխատել են ազնվորեն, իսկ մյուսները փախել են աշխատանքից, կոլխոզն ողտագործել վորպես ուրիշի հաշվին ապրելու միջոց, ընդհանուր աշխատանքից ավելի պոկել՝ քիչ աշխատելով» (ընկ. Յակովլևի թեզիսներից՝ Պորհուրգների 6-րդ համագումարին):

Դա հենց այն է, վորին ձգտում են կոլխոզների բոլոր թշնամիները—կուլակությունն ու նրա կողմնակիցները: Կուլակը հանդես է գալիս վորպես կողմնակից կոլխոզի յեկամուտը հավասար բաժանելուն. նա հանդես է գալիս, կոլխոզում «հավասարություն» քարոզելով: Նա գեմ է աշխատանքի համեմատ բաժանելուն, վորովհետեւ ինչպես կուլակներն են սովորեցնում կոլխոզնիկներին, «գա մի քայլ և գեպի հետ... իսկական կոմունիզմն իբրեւ թե նշանակում է՝ ամեն ինչ հավասար բաժանել» (Յակովլև):

Այս կուլակային հավասարեցումն ամբողջովին համապատասխան նույն է նրա դասակարգային շահերին: Դրա միջոցով կուլակությունը աշխատում է կազմալուծել կոլխոզային արտադրությունը. խախտել աշխատանքային դիսցիպլինան և վերջապես քանդել կոլխոզը: Ահա թե այդ առթիվ ինչ է ասում ընկ. Յակովլևը. «Իսկ կուլակը ման է գալիս ու լրբորեն քթի տակ ծիծաղում: Նա ասում է շատ աշխատողին. «գործը հիմարներին է սիրում. ինչո՞ւ գուր տեղից աշխատել. միևնույն է՝ ավելի չես ստանա»: Իսկ նրան, վոր չի աշխատում, ասում է. «ինչո՞ւ աշխատել, ինչո՞ւ գուր տեղից ուժեր վատնել. չե՞ վոր, միևնույն է, դու քոնը կստանաս»: Դա կարելի է լսել ամեն մի կոլխոզում: Դա կուլակային խոսքեր են: Կուլակային այդպիսի խոսքերի դեմ պետք է հանել բոլոր կոլխոզները, իսկ այն «տեսաբաններին», վոր փորձում են յեկամուտը շնչի վրա բաժանելու. ձեք պաշտպանել, մենք այդպիսիներին արժանավոր կերպով այն անունը կտանք, վորպիսին են իրոք,— կուլակային քննողներ» (ձառ.—Պորհուրգների 6-րդ համագումարում):

Հարցը մոտկուց քննելով՝ դժվար չէ տեսնել, վոր կուլակային հավասարեցման տակ մեծագույն անհավասարությունն է թագնված: Միթե՞ սա հավասարություն է, յերբ կոլխոզում բարեխղճությամբ, նըվիրված, շատ ու լավ աշխատող կոլխոզնիկը հավասար բաժանման ժամանակ՝ նույնքան է ստանում, վորքան լողոր, պրոդուկտիկը, ծուլը, յենթակուլակն ու գրփողը,—մարդիկ, վոր «ուրիշի հաշվին ապրել սիրողներ» են:

Այդպիսի հավասարեցումը կոմունիզմի հետ ընդհանուր վոչինչ չունի:

Ասում ի ուրիշ առարկություն ևս, վորով պաշտպանում են յեկամուտը ու հողական-հավասարեցուցիչ սկզբունքով բաժանելը, վոր

նախընթացից պահաս անհետեթ չե. «Յեկամուտը վոչ թե շնչի վրա, այլ ըստ աշխատանքի բաժանելն՝ իբրեւ թե գոռ է անում, հարվածում է չքավորությանը»:—Այդպիսի առարկություն ել են անում: Իսկ դա ձիշտ է:—Տեսնենք:

Ի՞նչ է, միթե՞ չքավորը, մանավանդ բատրակը, չի կարողանում աշխատել: Մյուսներից վատ է աշխատում: Միթե՞ բատրակը կուլակի մոտ 18-ժամյա առաքալից աշխատանքի դպրոցը չի անցել: Միթե՞ աշխատանքում մրցելիս չքավորն ու բատրակը մյուսներից վատ պետք է աշխատեն: Վոչ: Ապա յեթե նրանք ուրիշներից վատ չպետք է աշխատեն, ուրեմն և ուրիշներից քիչ չպետք է ստանան: Ահա թե ինչու ձիշտ չպետք է համարել այն նկատառումը, վոր իբրեւ թե չքավորին պաշտպան են նրանք, վորոնք քարոզում են յեկամուտը շնչի բաժանելը: Այդպիսի բան չկա: Նրանք վոչ թե կողմնակից են չքավորին, այլ կուլակին, վորովհետեւ կուլակն է սովոր ուրիշի աշխատանքով ապրելու:

Իսկապես ով կարող է տուժել, յեթե վճռականորեն դադարեցվի յեկամուտը շնչի վրա բաժանելը: Նա, ով աշխատել չի ուզում. նա, ով կոլխոզ է մտել վորպես զրփող և վոչ աշխատող. նա, ով կոլխոզ է մտել, իրոք չցանկանալով կոլխոզնիկ լինել,—իսկ այդպիսիները՝ յենթակուլակներն են: Կուլակը դեռ հնուց սովոր է ուրիշի աշխատանքով ապրելու, վորովհետեւ նա կուլակ էլ լեղել է: Կուլակն այն լողին է յեղել, վորի համար աշխատել են չքավորները: Ահա այն լողին, այդ կուլակի դեմ ենք կանգնում բոլորս: Ահա կոլխոզն իրանց հարեան բարեխիղճ կոլխոզնիկի աշխատանքով ապրելու համար ողտագործել ցանկացող այդպիսի լողիկների դեմ յենելու ենք կանգնում կոլխոզնիկներին (ընկ. Յակովլևի ձառից, արտասանած Պորհուրգների 6-րդ համագումարում):

Պարզ է, վոր կոլխոզում շնչի կամ ծխի բաժանելու սպառողական-հավասարեցուցիչ սկզբունքի կողմնակից ու իրականացնող կարող է լինել նա, ով կոլխոզ է մտել վոչ իբրեւ իսկական աշխատավոր, վոր ցանկանում է իր կյանքն ու տնտեսությունը համայնեցման սկզբունքներով կառուցել, վոր սոցիալիզմի ուղին է անցել, այլ կուլակիկով աշխատանքի իսկական թշնամի, կուլակների կողմից բոլոր միջոցներով պաշտպանություն գտնող լողի տարրը:

Կուլակային հավասարեցման դեմ մենք լենինյան կանոնն ունինք, —«ով չի աշխատում, նա չի ուտի»:

Յեւ անա այդ կանոնն է, վոր դրվել է կոլխոզներում յեկամուտն ու բերքը բաժանելու վերաբերմամբ Պորհուրգների 6-րդ համագումարի ու համաժողովների կողմից: Կոլխոզային կոնֆերանսի ընդունած վորոշման հիմքում: Համաձայն այդ վորոշման՝ կոլխոզնիկների միջով բաժանելու համար սացված յեկամուտն ու բերքը պետք է բաժանվի բացառապես աշխատանքի քանակության ու վորակի համեմատ, վոր կոլխոզնիկներն են դեղ կոլիկիսիվ սեկետարյան մեջ, հաշված աշխատանքով: Այդ սկզբունքով՝ ով ավելի շատ ու ավելի լավ է աշխատում, նա ավելի շատ է ստանում. ով չի աշխատում, նա վոչինչ չի ստանում: Բաժանելու բոլոր մյուս,—ըստ շնչի, ծխի, փայի, հողի և այլ միջոցներն ու ձեղերը վնասակար են: Կոլխոզնիկի աշխատանքային մասնակցությունը համեմատ, աշխատողներով բաժանելը՝ գյուղատնտեսական



արտելի միակ ուղիղ սկզբունքն է: Այդ է ապացուցել բազմաթիվ կոլ-  
խոզների ու կոլխոզային հարյուրհազարանոց մասսաների պրակտիկան:

Այն կոլխոզներում, վորտեղ հակառակ հավասարեցուցիչէ՝ աշխա-  
տորերով բաժանելու սկզբունքն են գործադրել, այնտեղ աշխատանքա-  
յին դիսցիպլինան ավելի բարձր աստիճանի վրա է յեղել. աշխատան-  
քի արտադրականութիւնը քանակութեան ու վորակի կողմից ավելի  
բարձր, պրոգուլները, լոգրութիւնը և այլն նշանավոր չափերով իջել  
են, վորի հետեանքով ել կոլխոզի յեկամուտն ավելի է յեղել, ապա  
ուրեմն և ավելի է յեղել կոլխոզնիկի ստացած բաժինը կոլխոզից:

Գործարքայինը մտցնելով ու հաշվեառումը պատշաճ բարձրու-  
թեան վրա դնելով՝ ապահովում են այն պայմանները, վոր կոլխոզնե-  
րն անհապաղ ու առանց բացառութեան, կոլխոզների անդամների մի-  
ջև բաժանելիք յեկամուտն ու բերքը աշխատանքի քանակի ու վորակի  
համաձայն բաժանելու սկզբունքը մտցնեն:

Բաժանելու վերաբերմամբ Սորհուրդների 6-րդ համագումարի  
կայացրած վորոշման կուպիտ խախտում է հանգիստանում այն, վոր Ագր-  
քեշանի շատ բամբակային կոլխոզներում, այս տարվա գարնանը պայ-  
մանագրութեամբ տրվող առաջին ավանան առաջվա պես բաժանվել է  
հավասարեցնող—ծխային սկզբունքով: Դա շատ լուրջ ճեղքում է, վոր  
հետեանք է այն բանի, վոր աշխատանքի ուղիղ կազմակերպումն ու  
նրա հետ անխզելի կերպով կապված՝ յեկամուտն ըստ աշխատանքի  
բաժանելը շատ կոլխոզնիկներ գործնականորեն դեռ չեն յուրացրել,  
վոր կոլխոզային որդանների այդ ուղղութեամբ կատարած աշխատան-  
քը բացարձակապես չի կարելի բավարար համարել:

Ապա տեղերից ստացվող փաստերն ասում են, վոր կուլակու-  
թիւնն ամենաակտիվ կերպով պայքարում է կոլխոզների յեկամուտն  
աշխատանքային սկզբունքով բաժանելու դեմ, ամենաանհեթեթ պրո-  
փոկաչեխաներ անելով և այլն: Ավանսները, վորպես կոլխոզային յեկա-  
մուտի մի մաս պետք է բաժանվեն կոլխոզնիկների միջև՝ համաձայն  
իրանց գործադրած աշխատանքի:

Ապա մի քանի տեղերում վոմանք այն կարծիքին են, վոր իբրև  
թե դրամական յեկամուտը կարելի է բաժանել աշխատորերի վրա, իսկ  
հացը պետք է բաժանել շնչի, կամ տնտեսութեան: Սա արմատապես  
սխալ է և կուպիտ խախտումը Սորհուրդների 6-րդ համագումարի վո-  
րոշման: Արտելի անդամներին բաժանելիք փողն ել, հացն ել, բերքն  
ել, ամբողջ յեկամուտն ել առանց վոր և է բացասութեան՝ պետք է բա-  
ժանել միայն և միայն ըստ աշխատորերի:

Կուսակցութիւնն ու Սորհրդային կառավարութիւնը վճռական  
հրահանգ է ավել—յեկամուտն ու բերքը բաժանել աշխատանքի քա-  
նակութեան ու վորակի համաձայն: Այդ բանը մոռացողը պետք է դիտ-  
վի վորպես որենքի խախտող, կոլխոզի-թշնամի, դասակարգային թըշ-  
նամու գործակալ:

Միայն աշխատանքի և յեկամուտը բաժանելու ուղիղ կազմակերպ-  
ման ուղիով գյուղատնտեսական արտեղները կկարողանան սոցիալիս-  
տական տիպի տնտեսութեան կոլլեկտիվ արտադրութեան ավելի բարձր  
աստիճանի վրա կանգնել և ամրապնդել իրենց, վորպես կուսակցու-  
թեան ու Սորհրդային իշխանութեան հետընկեր՝ համատարած կոլլեկ-

տիվացման և դրա հիմունքով կուլակութիւնը վորպես դասակարգ  
վոշնացնելու գործում:

Կոլխոզային շարժման վճռական հանրագումարն ակնհայտ է: Դա  
այն, վոր «կոլխոզային ուղին ստուգված է սեփական փորձով միլիո-  
նավոր գյուղացիների կողմից և զնահատված ինչպես միակ ուղին, վոր  
նրան ազատում է կուլակային կապանքներից ու տանում դեպի կոլ-  
խոզային ազատ կյանք» (Սորհուրդների 6-րդ համագումարի վորոշում-  
ներից):





30741  
30741  
1199  
KİP 1  
9M 0  
Գինն է 50 կոպ.



---

---

**Kolxozlarda əməlin düzəliş təşqili və əməlin  
doğru tətbiqi yolda.**

AZƏRNƏŞR  
Baq — 1931

---

---